

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

» ԳՈՍ « ՓԲԸ



ՆԱԽԱԶԵՆԻՆՈՂ

«ԳՈՍ» ՓԲԸ

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Կ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

«ԳՈՍ» ՓԲ ընկերության կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի խոշորացված համայնքի Լիճքի գործող ձկնաբուծարանի ընդլայնման

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Լրամշակված)

Կատարող՝

«Թրիգգեր» ՍՊԸ տնօրեն



Ա. Պեպանյան

ԵՐԵՎԱՆ - 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	11
1.1. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը.....	11
1.2. Գործունեության բնութագիրը	12
1.3. Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը.....	19
1.4 Ոլորտը կարգավորող Իրավական հիմքը	21
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	25
2.1. Երկրաձևաբանություն, արտածին երկրաբանական երևույթներ, սեյսմիկ բնութագիր	25
2.2 Կլիմա	29
2.3 Մթնոլորտային օդ	35
2.4 Ջրային ռեսուրսներ.....	35
2.5 Հողային ծածկույթ	40
2.6 Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	43
2.7 Բուսական և կենդանական աշխարհ	45
2.8 Պատմամշակութային հուշարձանների ցանկը.....	51
2.9. Սոցիալ- տնտեսական բնութագիրը.....	56
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	65
4. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	71
5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՇԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	74
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	77
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	78

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր` բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործունեների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև.

շրջակա միջավայրի վրա ազդեցություն` հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները.

նախատեսվող գործունեություն` շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

ձեռնարկող` սույն օրենքի համաձայն՝ փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող և (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

ազդակիր համայնք` շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք.

շահագրգիռ հանրություն` փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթի ընդունման և (կամ) նախատեսվող գործունեության իրականացման

առնչությամբ հետաքրքրությունն ցուցաբերող իրավաբանական և ֆիզիկական անձինք.

գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների և (կամ) փորձաքննության գործընթացին.

հայտ՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրությային փաստաթղթի մշակման և (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ.

բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկի արգելոցային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի արգելավայրային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպում

ազգային պարկի տնտեսական գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն.

պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (m^3), զանգվածը (տ).

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

բնապահպանական կառավարման պլան՝ գործունեության հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում.

բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք

ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման սույն հաշվետվությունը կազմվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության որոշումների պահանջներին համապատասխան:

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը:

Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը սահմանում է, որ «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը և այլն»:

Սկսած 1991թ. շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել:

Ծրագրով իրականացվելիք աշխատանքների արդյունքում նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի հիման վրա:

Հաշվետվությունը ներառում է տվյալներ, հիմնավորումներ և հաշվարկներ, որոնք անհրաժեշտ են շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրականացման համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող էկոլոգիական ազդեցությունը (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել և գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և կամ նվազեցմանը ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

Նախապատմությունը

Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի 30.01.1959 թվականի թիվ 25 «Հողամասեր հատկացնելու մասին» որոշման համաձայն 18-րդ կետով բավարարվել է «Հայձուկ» տրեստի միջնորդությունը և Սևանի լճից ազատված պետական անտառային ֆոնդի հողերից հատկացրել է 120 հեկտար՝ ձուկ ավելացնելու արհեստական լիճ ստեղծելու նպատակով:

Հողի օգտագործման իրավունքի 31.10.1997 թվականի Ա թիվ 000126 ակտի համաձայն Գեղարքունիքի մարզպետարանի կողմից Գեղարքունիքի մարզ, «Սևան» ազգային պարկի Մարտունու տեղամասի տարածքում գտնվող «Իշխան» ՓԲ ընկերությանը մշտական օգտագործման համար հատկացվել է 120 հա հող ձկնաբուծության համար, հողատեսքը՝ ավազուտ անօգտագործելի:

ՀՀ պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչության, որպես Վաճառողի և «Իշխան» ՓԲ ընկերության, որպես Գնորդի միջև 16.10.1996 թվականի թիվ 78-2 սեփականաշնորհման պայմանագրով Գնորդը ձեռք է բերել «Լիճք ձկնորսական տնտեսությունը», որը գտնվում է Գեղարքունիքի մարզ, Մարտունու շրջան, գյուղ Լիճքում: Պայմանագրի 6-րդ կետի համաձայն՝ Գնորդը դառնում է «Լիճք ձկնորսական տնտեսության» գույքային և ոչ գույքային իրավունքների և պարտականությունների իրավահաջորդը, սույն պայմանագրի և ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեն «ԳՈՍ» ՓԲ ընկերության անվամբ Գեղարքունիքի մարզ, Լիճքի ձկնորսական տնտեսության շենք շինությունների նկատմամբ 13.07.2004 թվականին գրանցել է սեփականության իրավունքը, իսկ 120

հա հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը, նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքներ, օգտագործման նպատակը՝ ձկնորսություն:

ՀՀ կադաստրի կոմիտեն «ԳՈՍ» ՓԲ ընկերության անվամբ Գեղարքունիքի մարզ, համայնք Լիճք, Ա-10 թ. 1-ին փողոց 35/3 հասցեում Լիճքի ձկնորսական տնտեսության շենք շինությունների նկատմամբ 21.02.2014 թվականին գրանցել է սեփականության իրավունքը, իսկ 120 հա հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը, նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքներ, գործառնական նշանակությունը՝ բնապահպանական:

ՀՀ կադաստրի կոմիտեն «ԳՈՍ» ՓԲ ընկերության անվամբ Գեղարքունիքի մարզ, համայնք Լիճք Ա-10 թաղամաս, 1-ին փողոց 35/3 հասցեում Լիճքի ձկնորսական տնտեսության շենք շինությունների նկատմամբ 06.10.2017 թվականին գրանցել է սեփականության իրավունքը, իսկ 118.8587հա հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը, նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքներ, գործառնական նշանակությունը՝ բնապահպանական:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը

Ձեռնարկող՝	«ԳՈՍ» ՓԲԸ:
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, գյուղ Լիճք Ա-10 թաղամաս, 1-ին փողոց 35/3:
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Գ. Լիճք / Շ / Մարտունի 1401 Գեղարքունիք, Հայաստան:
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնքի Լիճք բնակավայր:

Ձկնաբուծարանում գործունեությունը իրականացվում է «ԳՈՍ» ՓԲ ընկերության կողմից: ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում ընկերության գրանցման համարն է 76.120.00214, գրանցման ամսաթիվը՝ 17.08.1994թ., գրանցման հասցեն՝ Հայաստան, Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, 1401 (Հավելված 1):

Ձկնաբուծական տնտեսությունը գործում է դեռևս 1959 թվականից: Տնտեսության տարածքը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի խոշորացված համայնքի Լիճք բնակավայրի վարչական սահմաններում, բնակավայրից մոտ 200մ հեռավորության վրա, M10 Սևան-Մարտունի միջպետական ճանապարհի հարևանությամբ, իսկ ձկնաբուծարանի հեռավորությունը Սևանա լճից կազմում է մոտ 2.2կմ:

Հայկական ՍՍՀ Կոմկուսի Կենտկոմի և Մինիստրների Խորհրդի 1978 թվականի մարտի 14-ի թիվ 125 որոշմամբ հիմնադրվել է «Սևան» ազգային պարկը, ինչի արդյունքում ձկնաբուծարանի տարածքը ներառվել է նաև «Սևան» ազգային պարկի տնտեսական գոտում («Սևան» ազգային պարկի 1908.0 մետր բացարձակ նիշից բարձր տարածքներում հողամասի վարձակալության մասին N 126 Պայմանագիր, 11.08.2004թ. (Հավելված 2)):



Նկար 1.1.1 Իրավիճակային քարտեզ

1.2. Գործունեության բնութագիրը

«ԳՈՍ» ՓԲ ընկերությանը զբաղվում է ծիածանափայլ իշխանի, գեղարքունի և սիբիրյան թառափ ձկնատեսակների բուծմամբ, համապատասխանաբար տարեկան մոտ 95, 0.5 և 0.5 տոննա արտադրողականությամբ:

Ընկերությանը վարձակալության իրավունքով պատկանող ընդհանուր տարածքի մակերեսը կազմում է 118.8587 հա (Ձկնաբուծարանի տարածքի և շինությունների անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը ներկայացված է հավելված 3-ում):

Տարածքի անկյունային կետերի կոորդինատները բերված են աղյուսակ 1.2.1-ում:

Կոորդինատական համակարգը ARM WGS 84

Աղյուսակ 1.2.1

N	X	Y
1	8520332.117	4448862.574
2	8520372.516	4448888.492
3	8520410.137	4448912.007
4	8520464.237	4448945.257
5	8520501.653	4448968.685
6	8520535.534	4448990.529
7	8520577.061	4449012.073
8	8520902.463	4449217.061
9	8521829.688	4448452.054
10	8521365.971	4447982.237
11	8521298.804	4447922.176
12	8521284.437	4447909.711
13	8521286.824	4447906.565
14	8521153.168	4447783.144
15	8521150.614	4447786.061
16	8521130.943	4447768.843
17	8521095.652	4447736.869
18	8521084.393	4447726.477
19	8521080.858	4447729.958
20	8521068.104	4447739.102
21	8521051.033	4447754.421
22	8521046.726	4447752.022
23	8521040.234	4447758.554
24	8521031.948	4447766.45
25	8520818.842	4447978.944
26	8520815.864	4447981.838
27	8520828.029	4448002.659
28	8520830.109	4448006.838
29	8520842.75	4448066.56
30	8520814.282	4448089.762
31	8520798.939	4448097.882
32	8520757.895	4448128.348
33	8520744.612	4448133.616
34	8520695.29	4448079.088
35	8520690.874	4448073.444
36	8520662.428	4448102.843
37	8520636.554	4448166.098
38	8520289.466	4448838.884
1	8520332.117	4448862.574

Նախատեսվող գործունեության տարածքի աշխարհագրական կոորդինատներն են՝

X- 40° 9'58.19"N, Y- 45° 14'49.20"E

Տարածքը իրենից ներկայացնում է կառուցապատված տարածք: Ձկնաբուծական տնտեսության բնականոն աշխատանքը լիարժեք ավահովելու համար տարածքում առկա են բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները, ճանապարհներ, գործող և չգործող ավազաններ, մանրածկան արտադրամասեր՝ ինկուբացիոն սրահով, վարչական շենք, հանգստի սենյակ, ցնցուղարան, զուգարան, պահեստ, պահակակետ, պոմպակայան, կաթսայատուն, ենթակայան, 320կվ հզորությամբ արևային վահանակներ և այլն:

Ձկնաբուծարանի հարևանությամբ անցնում է Մ10 ավտոճանապարհը, որի հեռավորությունը մոտակա ավազանից կազմում է 188 մ:

Անմիջապես հարևանությամբ է գործում է Ալկաֆիշ ձկնաբուծական տնտեսությունը, որի տարեկան արտադրողականությունը կազմում է 1000 տոննա:

Ըստ Սևանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանի Սևանի ջրհավաք ավազանում գործում են նաև հետևյալ ձկնաբուծական տնտեսությունները:

Աղյուսակ 1.2.2

Համար	Համայնք	Տարածքը, մ ²	Ձկնատեսակ	Արտադրողականություն, տ/տարի
1	Գավառագետ	6700	Ծիածանափայլ իշխան	10
2	Կարճաղբյուր	1000	Սևանի իշխան	200
3	Ձկնագետ	20864	Սևանի իշխան	200
4	Սևանա լիճ	4000	Սևանի իշխան	60.86
5	Սևանա լիճ	800	Սևանի իշխան	50



Նկար 1.2.1 Ավազանների տեղադիրքի քարտեզ-սխեմա

Ընկերությունը ջրօգտագործումն իրականացվում է (16/01/2025-16/01/2028 թթ գործողության ժամկետով) N 042-25 Ջրօգտագործման թույլտվության (հավելված 4) պայմաններին համապատասխան՝ Լիճք գետից 450 լ/վրկ և կապտածավորված աղբյուրից 38 լ/վրկ ծախսով: Լճակներում ջուրը շրջանառվելուց հետո հեռացվում է դրենաժային համակարգ՝ Լիճք գետ 486.3 լ/վրկ ծավալով:

Ջրառի և ջրհեռացման կոորդինատական կետերն են.

Լիճք գետ՝	X = 45° 14' 33.8"	Y=40° 09' 58.4"
Կապտածային աղբյուր՝	X = 45° 14' 10.5"	Y=40° 09' 33.4"
Ջրահեռացում՝	X = 45° 14' 49.5"	Y=40° 10' 05.0"

Ջրառի և ջրհեռացման վայրերը արտացոլված են նկար 1.2.2-ում:



Նկար 1.2.2 Ջրառի և ջրհեռացման վայրերը

Համաձայն (16/01/2025-16/01/2028 թթ գործողության ժամկետով) N 042-25 Ջրօգտագործման թույլտվության կեղտաջրերի մաքրում չի կատարվում: Ջրօգտագործման թույլտվությամբ սահմանվել է կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի հետևյալ տվյալները՝ ԹԿՊ լրիվ $4.0\text{գ}/\text{մ}^3$, ԹԿՊ $10.0\text{գ}/\text{մ}^3$, կախութային մասնիկներ $11.0\text{գ}/\text{մ}^3$, ազոտ ամոնյակային $0.2\text{գ}/\text{մ}^3$, նիտրատ-իոն $0.5\text{գ}/\text{մ}^3$, նիտրիտ-իոն $0.05\text{գ}/\text{մ}^3$, ֆոսֆատ-իոն $0.05\text{գ}/\text{մ}^3$:

Ջրավազանների վրա տեղադրված են աեռատորներ, որոնք ապահովում են ջրի շրջապտույտը՝ անհրաժեշտ թթվածնով հագեցնելու համար և ստեղծում են բարենպաստ միջավայր կենդանիների բուծման համար: Չնայած, որ ընկերության ջրօգտագործման թույլտվությունը ծավալը $450 \text{ ր}/\text{վ}$ է, վերջին տարիներին աեռատորների կիրառումը թույլ է սովել բավարարվել $200-250 \text{ ր}/\text{վ}$ ջրով: Այս պահին օգտագործվում է 18 աեռատորներ: Նախատեսվում է ձկնաբուծարանի ընդլանման

դեպքում հասցնել աերատորների քանակը 40-ի, ինչը թույլ կտա արտադրական ծավալները հասցնել 200 տոննայի:

Տարածքի թվով 10 ավազանները կահավորված են երկաստիճան ձկնարգել ցանցերով, որոնց բջիջների չափերը կախված են կոնկրետ ջրավազանում աճեցվող ձկան չափերից: Ձկնարգել ցանցերեն տեղադրված նաև ջրառի և ջրահեռացման կետերում: Նախատեսվող 8 ավազանները նույաես հագեցած կլինեն երկաստիճան ձկնարգել ցանցերով: Նախատեսվող ավազանները նախկինում ծառայել են, որաես ձկնաբուծական տնտեսության ավազաններ և հավելյալ շինարարական աշխատանքներ չեն պահանջում:

Ձկնաբուծարանի հատակին կուտակված նստվածքը, որը հիմնականում կազմված է ձկների կերից, արտաթորանքից և օրգանական նյութերի քայքայումից, կարող է օգտագործվել որաես բնական պարարտանյութ: Այն պարունակում է բազմաթիվ օգտակար տարրեր, ինչախսիք են ազոտը (N), ֆոսֆորը (P) և կալիումը (K), որոնք կարևոր են բույսերի աճի համար:

Տարվա ընթացքում 1 կամ 2 անգամ յուրաքանչյուր ավազան ցամաքեցվում է հատակային նստվածքի մաքրման աշխատանքներ կատարելու համար: Մաքրման աշխատանքների արդյունքում առաջանում է տարվա ընթացքում մոտ 8 տոննա սննդամթերքի արտադրության կեղտաջրերի նստվածք 11139030 02 00 4 ծածկագիրով թափոն: Ձկնաբուծարանի ընդլայնման արդյունքում թափոնի ծավալը կհասնի առավելագույնը 20 տոննա/տարի: Թափոնները օգտագործվում են, որաես պարարտանյութ Լիճք համայնքի բնակիչների կողմից:

Հատակային նստվածքը Լիճք բնակավայրի բնակիչների կողմից օգտագործվում է որաես պարարտանյութ գյուղատնտեսական կամ այգեգործական հողերում:

Անհրաժեշտ քանակի (մոտ 150000 հատ) մանրաձկան մի մասը գնվում է, իսկ մնացած մասը աճեցվում է Ընկերության մանրաձկան արտադրամասում՝ ինկուբացիոն սրահում: Մանրաձկից մինչև ապրանքային ձկան աճեցման ցիկլը տևում է 2-3 տարի: Տարվա միջին արտադրողականությունը կազմում է 95տ ապրանքային ձուկ, որի համար անհրաժեշտ է գնել կամ աճեցնել մոտ 150000 հատ

մանրաձուկ: Մանրաձկից էլքը կազմում է մոտ 80-90%: Սատկած մանրաձկան հավաքը կատարվում է յուրանքանչույր օր՝ պլանային ռեժիմով և ըստ անհրաժեշտության՝ առանց ռեժիմ սահմանելու: Սատկած մանրաձկան հավաքման համար օգտագործվող ցանցերը և տարողությունները ենթակա են պարտադիր ախտահանման յուրաքանչյուր օգտագործումից հետո: Սատկած մանրաձուկը աշխատողների կողմից ամենօրյա ռեժիմով հեռացվում է տարածքից և օգտագործվում է որպես անասնակեր:

Տարեկան 95 տոննա ծիածանափայլ իշխան արտրադրելու համար պահանջվում է 140-150 տոննա կեր: Կիրառվող կերը համապատասխանում է ԳՕՍՏ 10385-2014/ Համակցված ձկան կեր տեխնիկական պայմանների պահանջներին, որը արտադրվում է Միացյալ Թագավորությունում է «Dragon Feeds» LTD -ի կողմից (Համապատասխանության սերտիֆիկատը ներկայացված է Հավելված 5-ում):

Ձկների կերակրման նորմը կապված է ջրավազաններում ջրի փաստացի ջերմաստիճանից: Քանի որ կերակրումը կատարվում է սահմանված նորմերին համապատասխան:

Կերի դոզան և կերակրման միջակայքերը վերահսկվում են հերթապահ օպերատորի կողմից: Կախված սեզոնից կերակրումը կատարվում է օրեկան 1-3 անգամ:

Ձկնաբուծարանի աշխատանքային ռեժիմը ընդունված է շուրջ տարի՝ 365 օր, 24 ժամով: Աշխատողների թիվը կազմում է 6 մարդ: Ընկերության տարածքում աշխատողների համար նախատեսված է հանդերձարան, ցնցուղարան, զուգարան և հանգստի սենյակ:

Ընկերության տարածքը ապահովված է խմելու ջրով, գազով և էլեկտրաէներգիայով: «Վիոլիա ջուր» ՓԲ, «ՀԷՅ» ՓԲ և «Գազպրոմ Արմենիա» ՓԲ Ընկերությունների հետ կնքված պայմանագրերը ներկայացված են Հավելվածներ 6,7,8-ում:

Կենադային աղբը տարածքից հեռացվում է պայմանագրային հիմունքներով՝ Մարտունու կոմունալ ծառայության միջոցով (պայմանագիրը ներկայացված է Հավելված 9-ում):

Ընկերությունը իր գործունեությունն իրականացնում է օրենքով սահմանված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին համաձայն:

1.3. Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը


Դեռևս Խորհրդային տարիներին Լիճքի ձկնաբուծարանը գործել է ամբողջ հզորությամբ, օգտագործելով տարածքում առկա բոլոր ավազանները:

Անկախացումից հետո տարիների ընթացքում արտադրանքի ծավալները նվազել են: Վերջին տարիներին Ընկերության արտադրողականությունը կազմում է տարեկան 95 տոննա ծիածանափայլ իշխան: Այս պահին տարածքում առկա ավազաններից միայն թվով 10 են օգտագործվում:

Հաշվի առնելով ձկնարտադրանքի հանդեպ օրեցօր աճող պահանջարկը, ինչպես նաև արդի տեխնալոգիաների հասանելիությունը, Ընկերությունը ցանկանում է ավելացնել արտադրանքի ծավալները հասցնելով տարեկան 200 տոննա և ավել:

Ձուկը իրացվում է կենդանի վիճակում: Արտադրանքի պահեստ չի նախատեսվում: Արտադրանքի համար սառնարանային տնտեսության անհրաժեշտություն չկա:

Ընկերության տարածքում նոր կառուցապատում չի նախատեսվում, գոյություն ունեցող 10 ավազանների ավելացվելու են 8 առկա ավազանները, որոք այս պահին ցամաքեցված են: Ինչը լիովին բավարար է տարեկան 200 տոննա և ավել արտադրողականությունն ապահովելու համար: Նախատեսվող (առկա, բայց ցամաքեցված) 8 ավազաններից յուրաքանչյուրի արտադրողականությունը կկազմի մոտ 13 տոննա:



Նկար 1.3.1 Ավազանների ջրի շրջապտույտի սխեմա

Ավել ջրօգտագործման պահանջարկ ևս չի առաջանա, քանի որ Ընկերությունը նախատեսում ավելացվել աեռատորներների քանակը: Չնայած, որ ընկերության ջրօգտագործման թույլտվությունը ծավալը 450 լ/վ է, վերջին տարիներին աեռատորների կիրառումը թույլ է տվել բավարարվել 200-250 լ/վ ջրով:


Ընդհանուր համակարգից ջուրը պարբերաբար մղվում է մեխանիկական գտման սարքերով կահավորված ավազան, որտեղ ջրից ֆիլտրում են մեխանիկական խառնուրդները, կախութային նյութը: Անջատված մեխանիկական խառնուրդները, կախութային մասնիկները ջրի հակառակ շիթի կիրառմամբ նստեցվում են հատուկ տարողությունների մեջ, ինչը այնուհետև կուտիլիզացվի կօգտագործվի որպես պարարտանյութ:



Տեղադրված է 2 մեխանիկական թմբուկային ֆիլտրեր, որոնք օգտագործվում է ձկնաբուծարաններում ջրի մաքրման համար: Այն ծառայում է ջրից պինդ աղտոտիչները (օրինակ՝ սննդի մնացորդներ, արտաթորանքներ և այլ մասնիկներ)

գտելու համար՝ նպաստելով մաքուր ջրի շրջանառությանը: Թմբուկը պտտվում է, և ֆիլտրային ցանցը բռնում է պինդ մասնիկները:

Մաքրված ջուրը վերադառվում է ընդհանուր համակարգ, ինչը ապահովում է ջրային ռեսուրսի արդյունավետ օգտագործում:



1.4 Ոլորտը կարգավորող Իրավական հիմքը

- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373-Ն, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:
- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի

պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՀ օրենք ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.), որով կարգավորվում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը. մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ընդ. ՀՕ-110, 21.06.2014թ., խմբ. 03.05.23թ. ՀՕ-150-Ն), որը կարգավորում է ՀՀ-ում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:
- «Թափոնների մասին» (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.) ՀՀ օրենք, որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:
- «Բնապահպանական վերահսկողության մասին» (ՀՕ-82-Ն, 11.04.2005թ.), որով կարգավորում է ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները և սահմանում է ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայման-ների, դրանց հետ կապված հարաբերությունների և բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը:

- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:
- ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրակեղևամակարդերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:
- ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N764-Ն որոշումը, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:
- ՀՀ կառավարության 05.05.2011թ.-ի N608-Ն որոշում, որով հաստատվել է ձկնաբուծական մթերքների արտադրության ձեռնարկություններում վտանգի աղբյուրների վերլուծության և կրիտիկական կետերի հսկման՝ ՎԱՎԿԿՀ (HACCP) համակարգի ներդրման միջոցառումների ծրագիրը:
- ՀՀ կառավարության 22.05.2003թ.-ի N 703-Ն որոշում, որով հաստատվել է ձկնային տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման կարգը:
- ՀՀ առողջապահության նախարարի 25.01.2010թ.-ի N01-Ն հրաման, որով հաստատվել են հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը:
- ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ.-ի N533-Ն հրաման, որով հաստատվել են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը:
- ՀՀ առողջապահության նախարարի 06.05.2002թ.-ի N138-Ն հրաման, որով հաստատվել են «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2 – III – 11.3 սանիտարական նորմերը:
- ՀՀ Սևանա լճի մասին օրենքը ՀՕ-190 ընդունված 2001 թվականի մայիսի 15-ին:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Քանի որ ձկնաբուծարանի տարածքը ընկնում է Լիճք բնակավայրի վարչական սահմաններում, ինչպես նաև «Սևան» ազգային պարկի տնտեսական գոտում, ուստի սույն գլխում ներկայացված տեղեկատվությունը հիմնականում վերցված է, ինչպես ձկնաբուծարանի տարածաշրջանի, այնպես էլ «Սևան» ազգային պարկի վերաբերյալ առկա գիտական տեղեկատվությունից:

2.1. Երկրաձևաբանություն, արտածին երկրաբանական երևույթներ, սեյսմիկ բնութագիր

Երկրաձևաբանության (գեոմորֆոլոգիական) տեսակետից ձկնաբուծարանի տարածաշրջանը իրենից ներկայացնում է միջլեռնային գոգավորություն (Արգիշի գետի հովտի) շրջապատված Վարդենիսի և Գեղամա հրաբխային լեռնաշխարհով: Վարդենիսի լեռնաշղթան սահմանափակում է տարածքը հարավից և ունի լահնակի տարածում՝ 2400-3520մ բացարձակ բարձրություններով: Արևմուտքից տարածքը սահմանափակվում է Գեղամա հրաբխային լեռնաշխարհով՝ մինչև 3598մ բացարձակ բարձրություններով: Հյուսիսային և արևելյան սահմաններն անցնում են Սևանա լճի ափով, որտեղ լանդշաֆտը համեմատաբար հարթ է, մինչև 1900.0մ բացարձակ բարձրություններով:


Վարդենիսի և Գեղամա լեռնաշղթաներում տասնյակների են հասնում հրաբխային կոները: Լեռնաշղթաների հիմնական գագաթներն են՝ Վարդենիս (3521.0մ), Սակոյվար (3299.0մ), Աստղոնք (3470.0մ), Արմաղան (2829.0մ), Սպիտակսար (3566.0մ), Աժդահակ (3597.0մ):

Լանդշաֆտը իր բնույթով բաժանվում է երկու մասի՝

1. Հարավային և արևմտյան՝ ընգրկում է Վարդենիսի և Գեղամա լեռնաշղթայի ջրբաժան մասը,
2. Հյուսիսային և արևելյան՝ տարածվում է Վարդենիսի լեռնաշղթայից դեպի հյուսիս և Գեղամա լեռնաշղթայից դեպի արևելք հասնելով Սևանա լճի ափին:

Վարդենիսի լեռնաշղթայի ջրբաժան մասն ունի լայնակի տարածում և իրենից ներկայացնում է անտիկլինալային ծալք: Այն կազմված է հիմնականում երրորդական հասակի հրաբխածին-նստվածքային ապարներով և չորրորդական հասակի անդեզիտաբազալտային կազմի լավաներով:

Տարածաշրջանի լանջերի թեքությունների և երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզները բերվում է ստորև՝




Նկար 2.1.1. Լանջերի թեքությունների քարտեզ

Ռելիեֆը խիստ բարդացված է բազմաթիվ համեմատաբար նեղ և խորը Y-ա ձև կիրճերով և ձորակներով:

Գեղամյա հրաբխային լեռները ձգվում են Սևանա լճի արևմտյան մասով, համարյա միջօրեականի ուղղությամբ:

Բազմազան ու հարուստ են մարզի օգտակար հանածոները: Մեծ արժեք են ներկայացնում քրոմիտի (Շորժա), ոսկու (Սոթք), բազալտի և այլ շինանյութերի պաշարները, հանքային (Լիճք, Սևան, Արևիկ) և քաղցրահամ (Մասրիկի գոգավորության, Մարտունի-Արծվանիստի, Մարուխանի) ջրերի հանքավայրերը:

Հայաստանի Հանրապետություն, Երկրաձևաբանության քարտեզ




Նկար 2.1.2. Երկրաձևաբանության քարտեզ

Ըստ 2020 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի N 102-Ն Հրամանի՝ «ՀՀՇՆ 20.04_Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերը»-ի Հավելված 1-ի, տեղամասի տարածքը գինվում է 1 սեյսմիկ գոտում, որտեղ հորիզոնական արագացման արժեքը 0.3g է, տես նկար 2.1.3-ը:

Բուն ձկնաբուծարանի և հարակից տարածքներում սողանքային երևույթները բացակայում են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՄԵՑՄՄԻՎ ԿՏԱՆԳԻ ԳՈՏԻՎՈՐՄԱՆ ՔԱՐՏԵԶ



Նկար 2.1.3. ՀՀ սեյսմիկ գոտիների քարտեզ



Նկար 2.1.4. ՀՀ տարածքի առավել վտանգավոր սողանքների քարտեզ

2.2 Կլիմա

Տարածքի կլիման բնութագրվում է համեմատաբար երկարատև ցուրտ ձմեռով և տաք ամառով: Օդի դիտված բացարձակ առավելագույն և նվազագույն ջերմաստիճաններն են -31.7°C և 33.6°C : Ձմռան տևողությունը մոտ 4 ամիս է: Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը 103 օր: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 522մմ: Միջին տարեկան օդի հարաբերական խոնավությունը կազմում է 68 տոկոս: Քամու Գերակշռող ուղղությունը հունիս օգոստոս ամիսներին հյուսիս արևելք: Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին հյուսիս: Միջին ամսական արագությունները տատանվում են 0.6-2.01 մ/վ:



Նկար 2.2.1. Կլիմայական գոտիների քարտեզ

Աղյուսակ 2.2.1. Օդի ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների. °C												Միջին տարեկան. °C	Բացարձակ նվազագույն. °C	Բացարձակ առավելագույն. °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Մարտունի	-5.2	-4.9	-1.3	5.0	9.8	13.4	16.4	16.3	13.2	8.4	2.5	-2.6	5.9	-31.7	33.6

Աղյուսակ 2.2.2. Օդի միջին առավելագույն (մ.ա.) և միջին նվազագույն (մ.ն.) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	մ.ա/մ.ն.	ըստ ամիսների. °C												Միջին տարե կան. °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
Մարտունի	մ.ա.	-0.7	-0.1	3.6	10.4	15.6	19.4	22.1	22.2	19.4	13.9	7.2	1.7	11.2
	մ.ն.	-8.8	-8.9	-5.3	0.5	4.7	7.8	10.9	10.6	7.3	3.4	-1.4	-6.1	1.2

Աղյուսակ 2.2.3. Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	ա/ն	ըստ ամիսների. °C												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
Մարտունի	ա.	10.5	11.5	18.4	25.1	27.6	30.0	33.3	33.6	30.6	23.7	19.5	15.0	33.6
	ն.	-28.4	-31.7	-27.4	-17.6	-10.0	-4.1	-0.1	2.0	-4.2	-12.1	-16.6	-20.5	-31.7

Աղյուսակ 2.2.4. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	Ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
Մարտունի	68	69	68	66	67	70	73	71	66	64	65	66	68	68	61	73	54

Աղյուսակ 2.2.5. Ձմռան սկիզբը, վերջը և տևողությունը (օդի 0 °C ջերմաստիճանի կայուն անցումը գարնանը և աշնանը)

Բնակավայրի անվանումը	Սկիզբ	Վերջ	Տևողություն, օր
Մարտունի	30 նոյեմբեր	23 մարտ	114

Աղյուսակ 2.2.6. Քամու հաշվարկային արագությունը

Բնակավայրի անվանումը	Միջին տարեկան մտնողորտային ճնշումը, (հՊա)	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (>15 մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ <<n>> տարիների ընթացքում		
				25	50	100
Մարտունի	805.3	2.6	47	25	27	28

Աղյուսակ 2.2.7. Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը <u>միջին ամսական</u> մմ օրական առավելագույն													Չնաձաճկույթ	
	ըստ ամիսների													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան		
Մարտունի	27	31	47	59	74	69	46	31	32	43	38	25	522	168	354
	51	34	40	46	41	69	65	43	59	49	84	41	84		

Աղյուսակ 2.2.8. Նշված սահմաններում օդի միջին օրական ջերմաստիճանով օրերի քանակը

Ջերմաստիճանների սահմանները	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
Ջերմաստիճանային միջակայք T, °C	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
Մարտունի													
1	-24.9-ից մինչև -20.0	0.02	0.1	0.01									
2	-19.9-ից մինչև -15.0	0.4	0.7	0.2								0.04	
3	-14.9-ից մինչև -10.0	3.6	3.7	1.2	0.01						0.1	1.3	
4	-9.9-ից մինչև -5.0	10.9	8.2	4.8	0.2					0.02	1.4	7.6	
5	-4.9-ից մինչև 0.0	13.1	11.4	11.2	2.4	0.05				0.4	5.9	13.0	
6	0.1-ից մինչև 5.0	2.7	4.0	11.4	11.6	1.7	0.1		0.2	4.4	14.6	8.4	
7	5.1-ից մինչև 10.0	0.04	0.1	2.0	13.1	14.2	2.7	0.2	0.1	4.2	16.9	7.7	0.5
8	10.1-ից մինչև 15.0			0.1	2.2	13.9	18.0	7.5	8.1	18.0	9.0	0.2	0.01
9	15.1-ից մինչև 20.0				0.1	1.0	8.9	21.7	21.5	7.3	0.2		
10	20.1-ից մինչև 25.0						0.2	1.5	1.2	0.2			

Աղյուսակ 2.2.9 Քամի

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, % (ըստ ուղղությունների) Միջին արագությունը								Անոթորի կրկնելիությունը, %	Միջին ամենկվան արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների	Գերակշռող ուղղությունը թեկտոնա-ինտեռմալ ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
Մարտունի	Հունվար	15	18	8	3	13	19	10	14	85	0.6	ՀսԱրլ	1.9	Հս	0.6
		0.7	0.6	0.5	0.6	0.8	0.5	0.5	0.5						
	Ապրիլ	14	17	11	4	12	19	12	11	61	1.7				
		1.8	1.4	1.9	1.6	1.7	1.7	1.5	1.5						
	Հուլիս	19	39	24	2	2	4	5	5	56	2.1				
		1.9	1.9	2.2	1.6	1.4	1.4	1.2	1.6						
	Հոկտեմբեր	18	20	9	2	12	17	13	9	79	0.8				
		0.8	0.7	0.7	0.6	0.8	0.6	1.9	2.2						

Աղյուսակ 2.2.10. Ձյան ծածկույթ

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
Մարտունի	75	103	151	114

2.3 Մթնոլորտային օդ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճքի ձկնաբուծարանի և հարակից շրջանում մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայաններ չկան: Որոշակի պատկերացում տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ նաև հաշվարկային եղանակով: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Աղյուսակ 2.3.1.

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 - 100	0.098	0.007	0.034	1.3
10 - 50	0.095	0.006	0.033	1.1
< 10	0.071	0.006	0.023	0.8

Ձկնաբուծարանի տարածքին մոտ գտնվող Լիճք բնակավայրում մշտական բնակչությունը ըստ պաշտոնական տվյալների չի գերազանցում 10000 մարդ: Հետևաբար, ձկնաբուծարանի տարածքի համար որպես մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշ պետք է ընդունել. փոշի 0.071մգ/մ³, ծծմբի երկօքսիդ 0.006 մգ/մ³, ազոտի երկօքսիդ 0.023մգ/մ³ և ածխածնի օքսիդ 0.8մգ/մ³:

2.4 Ջրային ռեսուրսներ

Լիճք, գետակ Հայաստանի Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Գեղամա լեռների արևելյան փեշերից և Լիճք գյուղից 2 կմ հյուսիս-արևելքում թափվում Սևանա լիճ: Երկարությունը՝ 8 կմ: Լիճք գետի գետաբերանին Սևանա լճի համեմատաբար ծանծաղ է: Ջրհավաք ավազանը մակերեսը 36,9 կմ² է: Ակունքի ծովի մակերևույթից բարձրությունը 2006 մետր է, իսկ գետաբերանի բարձրությունը՝ 1900,6 մետր: Լիճք գետի միջին տարեկան հոսքը կազմում է 1.88 մ³/վ:





Figure 3. Map of Sevan National Park (Source: Environmental Research and Management Center, American University of Armenia).



Թողք մ3/վ	Լիճք-Լիճք x-40°10'00,66" y- 45°14'35,66"											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Բնական միջին	1,81	1,75	1,79	1,87	1,88	1,95	1,92	1,91	1,99	1,99	1,93	1,86
Բնական նվազագույն	0,92	0,92	0,97	0,96	1,06	1,29	1,16	1,13	1,24	1,12	1,00	1,01
Բնապահպանական	0.87	0.87	0.87	0.87	0.87	0.87	0.87	0.87	0.87	0.87	0.87	0.87

Սևանի ՋԿՏ-ում մակերևութային ջրային մարմինների ռիսկի գնահատումը ստ կենսաբանական և ֆիզիկաքիմիական մոնիթորինգի տվյալների ցույց է տվել, որ Լիճք ՋՄ 4-066 դիտակետում ջրի որակը ըստ ֆիզիկաքիմիական, կենսաբանական, և էկոլոգիական կարգավիճակի դասվում է (լավ (II)) դասի:


Գետ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	ՋՄ-ի համարը	Ջրի որակի դաս	Հիմնական ցուցանիշները (Ջրի որակի ցուցանիշի դաս)	Հիմնական ճնշման պատճառը
Լիճք	0.5 կմ գյ. Լիճքից վերև	ՋՄ 4-066	Լավ (II)	-	Ոչ էական ճնշում
	Գետաբերան	ՋՄ 4-066	Լավ (II)	-	Ոչ էական ճնշում

Գետ	Ջրային մարմնի համարը	*Ռիսկի կատեգորիան՝ ըստ ֆիզիկաքիմիական կարգավիճակի	Ռիսկի կատեգորիան՝ ըստ կենսաբանական կարգավիճակի	Ռիսկի կատեգորիան՝ ըստ հիդրոլոգիական կարգավիճակի	Ռիսկի կատեգորիան՝ ըստ էկոլոգիական կարգավիճակի	Հիմնական ճնշման պատճառը	Ֆիզիկաքիմիական ցուցանիշները, որոնք պայմանավորում են ՋՄ-ի ջրի «միջին», «անբավարար» կամ «վատ» որակը
Լիճք	ՋՄ 4-066	Ոչ ռիսկային (լավ (II))	Ոչ ռիսկային (լավ (II))	չկան տվյալներ	Ոչ ռիսկային (լավ (II))	Ոչ էական ճնշում	-

ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ՋՐՀԱՎԱՔ ԱՎԱԶԱՆԻ ՋՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՅԱՆՑ



ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ՋՐՀԱՎԱՔ ԱՎԱԶԱՆԻ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՅԱՆՑ



Ստորերկրյա ջրային ռեսուրսների բնութագիրը - Սևանի ՋԿՏ-ի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է մեզո-կայնոզոյան հասակի հրային, նստվածքային և փոխակերպային ապարներով, որոնք տեկտոնական խախտման գոտիներում ներառված են ինտրուզիվ մարմիններով: ՋԿՏ-ի տարածքում մեծ տարածում ունի չորրորդական հրաբխակայունությունը: Լիճքի ստորերկրյա ջրերի մարմինների կողը 3G-6-ն է: Ընդհանուր բեռնաթափումը կազմում է 74,0 մ/վ: Տեսակի կառուցվածքը ներկայացված է, որպես հանքային ջրային հորեր:

2022 թվականի մայիսին, օգոստոսին և հոկտեմբերին Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի նմուշառումն իրականացվել է 16 դիտակետում «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ջրի նմուշները վերցվել են ափամերձ և կենտրոնական գոտիներից, ուղղաձիգ մակերևութային (մինչև 0.5 մ խորության), միջին և հատակամերձ շերտերից: Գերմանիայի Շրջակա միջավայրի Հելմհոլցի կենտրոնի, ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի հետ համատեղ իրականացվող SEVAMOD2 հայգերմանական ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր ամիս իրականացվել է ջրի որակի մոնիթորինգ լճի 2 դիտակետում ուղաձիգ տարբեր խորություններում՝ մակերևույթից մինչև հատակամերձ ջրաշերտեր: Յուրաքանչյուր ամիս հետազոտվել է ջրի 14 փորձանմուշ: Մեծ Սևանի ջրի որակը 2022 թվականին հիմնականում գնահատվել է 4-րդ («անբավարար» որակ) կամ 5-րդ դաս («վատ» որակ), իսկ Փոքր Սևանինը՝ հիմնականում 4-րդ դաս («անբավարար» որակ), երկու դեպքում էլ պայմանավորված հիմնականում կենսածին նյութերով: Սևանա լճի աղտոտման հավանական պատճառ են հանդիսանում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի, ինչպես նաև գյուղատնտեսական հոսքաջրերի՝ առանց պատշաճ մակարդակով մաքրվելու արտահոսքերը Սևանի ՋԿՏ-ի գետեր կամ անմիջապես Սևանա լիճ: Ամբողջապես չմաքրված կեղտաջրերն իրենց հետ գետեր, իսկ այնուհետև լիճ են տանում ազոտի և ֆոսֆորի զգալի քանակություն:

2.5 Հողային ծածկույթ


Հողը երկրակեղևի մակերեսային փխրուն շերտն է, որը փոփոխվում է մթնոլորտի և օրգանիզմների ազդեցությամբ, լրացվում է օրգանական մնացուկներով: Հողն անընդհատ զարգանում և փոփոխվում է: Բնութագրվում է բերրիությամբ՝ բույսերին մատչելի սննդանյութերով և ջրով ապահովելու ունակությամբ, որի շնորհիվ այն դառնում է արտադրամիջոց, աշխատանքի առարկա, նյութական բարիքների աղբյուր:

Հողը գյուղատնտ. արտադրության հիմնական միջոցն է. ագրոտեխնիկական, ագրոքիմիական ու բարելավող միջոցառումների կիրառմամբ այն կարելի է դարձնել առավել արդյունավետ, որի ցուցանիշը բույսերի բերքատվությունն է:



Նկար 2.5.1. Հողերի բնական տիպերի տարածման քարտեզ


«Սևան» ազգային պարկի տարածքի մեծ մասը կազմում են Սևանա լճից ազատված հողագրունտները: Դրանք ավազային են, թեթև, հումուսի աննշան պարունակությամբ: Հիմնականում ձևավորվել են հողագրունտի 3 խմբեր, որոնք ունեն հողագոյացման տարբեր ուղղություններ՝ խոնավ մարգագետնային ավազային, թերի զարգացած ավազակոպճային և սապրոքելիտային տափաստանացված: Զգալի տարածք են զբաղեցնում թերի զարգացած ավազակոպճային հողագրունտները: Գետերի հովիտներում և դրանց դարավանդներում ձևավորվել են գետահովտադարավանդային հողերը: «Սևան» ազգային պարկի Գիհի-կաղնուտային ռելիկտային, Սևանա թերակղզու արևելյան և Արտանիշ թերակղզու կենտրոնական ու արևելյան բլրապատ և լեռնոտ հատվածներում հանդես են գալիս լեռնատափաստանային չոր, իսկ 2400 մետր և ավելի բարձրություններում լեռնամարգագետնային հողերի տիպերը:



Նկար 2.5.2 ՀՀ-ում ծանր մետաղներով աղտոտված հողատարածքները

Քարտեզից պարզ է դառնում, որ հայցվող տարածքը գտնվում է ծանր մետաղներով չաղտոտված գոտում:

Համաձայն Գեղարքունիքի մարզպետարանի կողմից տրամադրված հողի օգտագործման իրավունքի N 130 պետական ակտի (Հավելված 10) բուն ձկնաբուծարանի տարածքի հողային ծածկույթը ներկայացված է ավագուստ անօդազործելի հողատեսքով:



Նկար 2.5.3. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիները

Հայաստանի Հանրապետության տարածքում ուղղաձիգ ուղղությամբ հերթափոխվում են տաս լանդշաֆտային գոտիներ:

Ձկնաբուծարանի տարածքը ընկնում է տափաստանային միջինլեռնային (1400-2300մ.ծ.մ) լանդշաֆտային գոտում:

2.6 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ինչպես նշվել է, ձկնաբուծարանի տարածքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք գյուղի ափամերձ տարածքում, որը տեղակայված է «Սևան» ազգային պարկի սահմաններում:

«Սևան» ազգային պարկը հիմնադրվել է Հայկական ՍՍՀ Կոմկուսի Կենտկոմի և Մինիստրների Խորհրդի 1978 թվականի մարտի 14-ի թիվ 125 որոշմամբ՝ Սևանա լճի բնական էկոհամակարգը պահպանելու նպատակով:

«Սևան» ազգային պարկը գտնվում է հանրապետության հյուսիս-արևելյան հատվածում՝ Գեղարքունիքի մարզում: Շրջապատված է Գեղամա, Վարդենիսի, Սևանի, Փամբակի և Արեգունու լեռնաշղթաներով:

Համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N 205-ն որոշման և 2019 թվականի հուլիսի 25-ի « Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ Վականի մայիսի 30-ի N 927-ն և 2007 թվականի հունվարի 18-ի N 205-ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին » N 947-Ն որոշման «Սևան» ազգային պարկի տարածքը բաժանվում է 4 տարածքագործառնական գոտիների՝ արգելոցներ, արգելավայրեր, ռեկրեացիոն և տնտեսական: Պարկի տարածքում կան 4 արգելոցներ՝ «Նորաշենի», «Լիճք-Արգիշի», «Գիլլի» և «Արտանիշի», որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 6839 հա, որից ցամաքային տարածքը՝ 3984 հա, իսկ ջրայինը՝ 2855 հա, 3 արգելավայրեր՝ «Գավառագետի», «Գիհի-կաղնուտային ռելիկտային, և «Նորաշենի», որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 3 277 հա, որից ցամաքային տարածքը՝ 2 505 հա, իսկ ջրայինը՝ 772 հա:

Ձկնաբուծարանի տարածքին ամենամոտը «Լիճք-Արգիշի» արգելոցն է:

«Լիճք-Արգիճի» արգելոցը գտնվում է ազգային պարկի հարավ-արևմտյան հատվածում՝ Ծակքար, Լիճք և Արգիճի գետերի գետաբերանային հատվածներում, և զբաղեցնում է 1175 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 482 հա, իսկ ջրայինը՝ 693 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 13.3 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 3.8 կմ երկարությամբ և 3.7 կմ լայնությամբ:

Արգելոցի նպատակն է ապահովել Լիճքի հանքային աղբյուրների, Արգիճի և Լիճք գետերի գետաբերանային հատվածում մնացորդային լճակների ջրաճահճային և ջրային բուսականության, թռչունների բնադրավայրի պահպանությունը, ինչպես նաև արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների՝ Սևանի իշխանի, Սևանի կողակ և Սևանի բեղլուի ձվադրումն ու զարգացումը: Արգելոցի տարածքի ռելիեֆը հարթ է: Ընկած է լճի ափից մինչև 1908 մետր բարձրության սահմաններում: Արգելոցի տարածքն ընդգրկում է Արգիճի, Լիճք, Բախտակ և Ծակքար գետերի գետաբերանային հատվածները, որտեղ լճի ջրի մակարդակի իջեցման և գետերի էրոզիայի բազիսի իջեցման պատճառով գետերը ստեղծել են 10-6 մետր խորությամբ ձորակներ: Լիճք գետի հատվածում դուրս են գալիս Լիճքի հանքային աղբյուրները և կան 3 փոքր լճակներ՝ 9.8, 3.1 և 1.3 հա մակերեսներով: Տարածքը գրեթե ամբողջությամբ պատված է անտառային տնկարկներով, որոնք հիմնականում կազմված են սոճու, բարդու, թխկու և ուռենու ծառուտներից:

Բնության հուշարձաններ

Աղյուսակ 2.6.1


		ՀՀ Գեղարքունիքի մարզ	
NN	Անվանումը	Տեղադիրքը	Դասակարգում
1	«Սնկատար» հրաբուխ	Գավառ քաղաքից 20 կմ արլ.	Երկրաբանական հուշարձան
2	«Աժդահակ» հրաբուխ	Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ.	Երկրաբանական հուշարձան
3	«Անանուն» ծալքավորում	Սևանա լճի հս-արլ. Ափին, երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա	Երկրաբանական հուշարձան
4	«Քարե ծով» քարացրոններ (շինգիլներ)	Լճաջեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք	Երկրաբանական հուշարձան
5	«Անանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն	Լճաջեն գյուղից 1 կմ հվ, հրախային խարամների գործող քարհանքի մոտ	Երկրաբանական հուշարձան
6	«Արմաղան» հրաբուխ	Մադինա գյուղից 3.5 կմ արմ.	Երկրաբանական հուշարձան
7	«Հայրավանք» բրածո ֆաունա	Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-արլ.	Երկրաբանական հուշարձան
8	«Սարանց» աղբյուր	Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան

9	«Խաչերի» աղբյուր	Գավառ քաղաքի արմ. Ծայրամասում	Ջրաերկրաբանական հուշարձան
10	«Արցունք քար» աղբյուր	Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
11	«Անանուն» աղբյուր	Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
12	«Անանուն» աղբյուր	Կարճաղբյուր գյուղի հվ-արլ. Եզրին, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
13	«Վանքի աղբյուր» աղբյուրների խումբ	Սարուխան գյուղի հվ. Ծայրամասում, ծ.մ-ից 1977 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
14	«Ակնա» լիճ	Ծաղկաշեն գյուղից 10 կմ արմ., Ակնասար լեռան լանջին	Ջրագրական հուշարձան
15	«Ենթալայյան մարգագետին»	Դրախտիկ գյուղի մոտ	Կենսաբանական հուշարձան
Ընդամենը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում- 15			Երկրաբանական – 7
			Ջրաերկրաբանական – 6
			Ջրագրական – 1
			Կենսաբանական- 1

Ձկնաբուծարանի տարածքի և Լիճք բնակավայրի շրջակայքում բնության հուշարձաններ առկա չեն: Ձկնաբուծարանին ամենամոտ հեռավորության վրա է գտնվում «Վանքի աղբյուր» և «Արմաղան» հրաբուխ բնության հուշարձանները՝ որոնք գտնվում են համապատասխանաբար 16.5 կմ և 11 կմ հեռավորության վրա:

2.7 Բուսական և կենդանական աշխարհ

Հայաստանի տարածքում առանձնացվում են 12 ֆլորիստիկ շրջաններ: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Սևանի ֆլորիստիկ շրջանում (Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ Կ.Թամանյանի և Գ.Ֆայվուշի, 2009թ), տափաստանային միջինլեռնային (1400-2300մ.ծ.մ) լանջափտային գոտում, որով և պայմանավորվում է տարածաշրջանի կենսաբազմազանությունը: Բուն ձկնաբուծարանի տարածքի բացարձակ բարձրությունները տատանվում են 1917-1922մ-ի սահմաններում:



Նկար 2.7.1. Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները

Տարածաշրջանին բնորոշ է անտառային և տափաստանային բուսականությունը:

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու ֆլորան ընդգրկում է անտառավոր բույսերի 1619 տեսակ: Ընդ որում՝ «Սևան» ազգային պարկի տարածքում աճում է անտառավոր բույսերի 1145 տեսակ, իսկ պահպանական գոտում՝ 1587: Պարկի ֆլորան ներկայացված է 28 ծառատեսակներով, 42 թփերի տեսակներով, 866 բազմամյա խոտաբույսերով և 209 միամյա ու երկամյա բուսատեսակներով: Պահպանական գոտու ֆլորան ներկայացված է 32 ծառատեսակներով, 102 թփերի տեսակներով, 1146 բազմամյա խոտաբույսերով և 307 միամյա ու երկամյա բուսատեսակներով:

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում է Հայաստանի համար 23 էնդեմիկ բուսատեսակ, որոնցից 13-ը Սևանի

Ֆլորիստիկ շրջանի էնդեմիկներ են: Միայն ազգային պարկի տարածքում աճում են Հայաստանի 3 էնդեմիկ և Սևանա լճի ավազանի 5 էնդեմիկ տեսակներ: 17 տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (պահպանական գոտում դրանք 48-ն են):

Ազգային պարկում և դրա պահպանական գոտում հայտնի են շուրջ 60 բուսատեսակներ, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես դեղաբույսեր: Շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի:

Սևանա լիճը շրջապատող լեռների և դրանց լանջերի տարբեր դիրքադրությունների, հողերի տիպերի, ռելիեֆային առանձնահատկությունների և այլ հանգամանքների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ, լավ է արտահայտված նաև ուղղահայաց գոտիականությունը:

Բուն ձկնաբուծարանի տարածքում հանդիպում են հետևյալ տեսակները.

1. Դառը օշինդր (*Artemisia absinthium*) - ընտանիքը՝ Աստղածաղկազգիներ (բարդածաղկավորներ), (*Asteraceae*),
2. Եղեգնախոտ եղեգանման (*Calamagrostis arundinacea*) - ընտանիքը՝ Հացազգիներ (*Poaceae*),
3. Կորեկ սովորական (*Panicum miliaceum*) - ընտանիքը՝ Հացազգիներ (*Poaceae*),
4. Երեքնուկ (*Trifolium*)- ընտանիքը՝ Բակլազգիներ (*Fabaceae*),
5. Կռատուկ մեծ (*Arctium lappa*)- ընտանիքը՝ Աստղածաղկազգիներ (բարդածաղկավորներ), (*Asteraceae*),
6. Եղինջ երկտուն (*Urtica dioica*) - ընտանիքը- Եղինջազգիներ (*Urniceae*),
7. Եղեգն սովորական (*Phragmites australis*) – ընտանիքը՝ Հացազգիներ (*Poaceae*),
8. Գեղավեր (*Cirsium*) - ընտանիքը՝ Աստղածաղկազգիներ (բարդածաղկավորներ), (*Asteraceae*),
9. Բարդի (*Pópusus alba*)- ընտանիքը՝ Ուռազգիներ (*Salicaceae*):

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հաշվարկվում են Փափկամարմինների (*Mollusca*) 43 տեսակներ, որոնք պատկանում են խխունջների և լորձամույուսկների, և Հողվածոտանիների 639

տեսակներ, որոնք պատկանում են միջատներին: Դրանցից 6-ը Հայաստանի էնդեմներ են: Կապտաթիթեռը (*Maculinea nausithous* Bergs), որն հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում:

Երկարաչանչ խեցգետինը (*Pontastacus leptodactylus*) Սևանա լճում հայտնաբերվել է 70-ական թվականների վերջին՝ պատահական ներմուծման շնորհիվ: Լիճ լցվող գետերում խեցգետին չի հանդիպել, սակայն խեցգետինը բավականին շատ է Սևանից սկիզբ առնող Հրազդան գետում: Երկարաչանչ խեցգետինը, ի տարբերություն այլ տեսակների, չի ձմեռում:

Սևանա լճի ձկները ներկայացված են սաղմոնազգի-Salmonidae, սիգազգի Coregonidae և ծածանազգի-Cyprinidae ընտանիքներով: Սաղմոնազգիներին են պատկանում Սևանի իշխանը (*Sevan Trout-Salmo ischchan* Kessler 1877) իր 4 էկոլոգիական ենթատեսակներով՝ Ամառային բախտակ (*S. ischchan aestivalis*), Ձմեռային բախտակ (*S. ischchan ischchan*), Գեղարքունի (*S. ischchan gegarkuni*), Բոջակ (*S. ischchan danilewskii*):

Սիգազգիների ընտանիքի ներկայացուցիչը 1920-30-ական թվականներին լճում կլիմայավարժեցված սիգն է (*Whitefish - Coregonus lavaretus*):

Ծածանազգի ձկնատեսակներին են պատկանում լճի երկու էնդեմիկները՝ Սևանի կողակը (*Khrami carp-Varicorhinus capoeta sevangi*) և Սևանի բեղլուն (*Sevan barble-Barbus goktschaicus*): 1980-ական թվականների սկզբից լճում սկսել է հանդիպել նաև արծաթափայլ լճածածանը (*Crucian carp-Carassius auratus gibelio*), որը պատահաբար լիճ է ներթափանցել Արարատյան դաշտի ջրային համակարգերից:

1987 թվականից Սևանա լճի երկու էնդեմիկ տեսակ՝ Սևանի իշխանը և Սևանի բեղլուն, ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում:

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են երկկենցաղների հետևյալ 4 տեսակները, որոնք պատկանում են Ցատկողներ (*Salientia*) կարգին՝ լճագորտ (*Rana ridibunda*), փոքրասիական գորտ

(*Rana macrocnemis*), կանաչ դոդոշ (*Bufo viridis*), Շելկովնիկովի ծառագորս (*H.a.shelkovnikovi*):

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են սողունների 16 տեսակներ, որոնցից 11 տեսակներ պատկանում են մողեսներ (*Lacertilia*) կարգին, իսկ 5 տեսակ՝ օձեր (*Serpentes*) կարգին: Դրանցից Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են խայտաբղետ մողեսիկը (*E.a.transcaucasica*) և փոքրասիական մողեսը (*Lacerta parva*):

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են թռչունների 267 տեսակներ, որոնք պատկանում են հետևյալ կարգաբանական խմբերին.

1. Սուզակներ (*Podicipediformes*) - 7 տեսակ.
2. Ձկնկուլ (*Pelecaniformes*) - 4 տեսակ.
3. Արագիլ, տառեղ, ջրցուլ (*Ciconiiformes*) - 11 տեսակ.
4. Ֆլամինգո (*Phoenicopteriformes*) - 1 տեսակ.
5. Գիշատիչներ (*Falconiformes*) - 30 տեսակ.
6. Սազեր, բադեր, կարապներ (*Anseriformes*) - 28 տեսակ.
7. Հավազգիներ (*Galliformes*) - 3 տեսակ.
8. Կռունկ, փարփար (*Gruiformes*) - 9 տեսակ.
9. Որոր, կոցար, քարադր (*Charadriiformes*) - 49 տեսակ.
10. Աղավնազգիներ (*Columbiformes*) - 4 տեսակ.
11. Կլուններ (*Cuculiformes*) - 1 տեսակ.
12. Բու (*Strigiformes*) - 3 տեսակ.
13. Այծկիթ (*Caprimulgiformes*) - 1 տեսակ.
14. Մանգաղաթներ, ծիծեռնակներ (*Apodiformes*) - 5 տեսակ.
15. Մեղվակեր, հոպոպ, ալկիոն (*Coraciiformes*) - 5 տեսակ.
16. Փայտփոր, վիզզուկ (*Piciformes*) - 4 տեսակ.
17. Ճնճղուկանմաններ (*Passeriformes*) - 102 տեսակ:

39 թռչնատեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Դրանցից մեկը՝ Հայկական որորը (*Laurus armenicus*) էնդեմիկ տեսակ է:

Ազգային պարկի տարածքում կան 26 տնտեսապես կարևոր նշանակություն ունեցող թռչնատեսակներ: Դրանցից կոնչան բադը, կարմրագլուխ սուզաբադը, քարակաքավը, լորը, սովորական տատրակը, թխակապույտ աղավին, անտառային աղավին և այլն հետաքրքրություն են ներկայացնում որսի տեսանկյունից:

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են կաթնասունների 44 տեսակներ, որոնք պատկանում են հետևյալ կարգերին.

1. Միջատակերներ (*Insectivora*) - 7 տեսակ.
2. Կրծողներ (*Rodentia*) - 15 տեսակ.
3. Նապաստակներ (*Logomorpha*) - 1 տեսակ.
4. Չղջիկներ (*Chiroptera*) - 7 տեսակ.
5. Գիշատիչներ (*Carnivora*) - 11 տեսակ.
6. Սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ (*Artiodactyla*) - 3 տեսակ:

Նշված տեսակներից 6-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում (վայրենակերպը, ջրասամույրը, գորշ արջը, խայտակաքիսը, անտառային կատուն, բեզուարյան այծը):

Բուն ձկնաբուծարանի տարածքում հանդիպում են հետևյալ տեսակները.

10. Փոքր սուզակ
11. Սպիտակ փոքր տառեղ,
12. Ճահճային մկնաճուռակ,
13. Սովորական հողմավար բազե,
14. Եղեգնահավ,
15. Սևուկ կտցար
16. Սովորական որոր
17. Հայկական որոր
18. Ոսկեգույն մեղվակեր

19. Դաշտային արտույտ
20. Գյուղական ծիծեռնակ
21. Դեղին խաղտոնիկ
22. Սպիտակ խաղտոնիկ
23. Սովորական քարաթռչնակ
24. Սովորական կաչաղակ
25. Մոխրագույն ագռավ
26. Տնային ճնճղուկ
27. Կորեկնուկ
28. Սպիտակափոր ոգնի
29. Կովկասյան երկառագի սպիտակատամ սրենչակ
30. Աքիս
31. Սովորական աղվես
32. Սովորական դաշտամուկ

2.8 Պատմամշակույթային հուշարձանների ցանկը

Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 104 հուշարձան (12 միավոր):

Աղյուսակ 2.8.1

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
Գերեզմանոց	9-20 դդ.	հս մասում	1982 թ. տարածքում կատարվել են խաչքարերի ամրացման աշխատանքներ
Խաչքար	10 դ.		եկեղեցուց 5 մ հվ, ընկած գետնին
Խաչքար	11-12 դդ.		հվ կողմում, խրված հողի մեջ
Խաչքար	1291 թ.		հվ կողմում, պատվանդանին, արձանագիր
Խաչքար	13 դ.		«Ծաղկեվանք» մատուռի հվ պատի մոտ
Խաչքար Էրզամի	1477 թ.		«Ծաղկեվանք» մատուռից հվ, 6 խաչքարերից աջից 5-րդը, պատվանդանին

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
Խաչքար Բատարի	1486 թ.		եկեղեցուց 8 մ հվ, կանգնեցրած գետնին, երեք խաչքարերից ձախակողմյանը
Խաչքար	1494 թ.		«Ծաղկեվանք» մատուռից հվ, 6 խաչքարերից աջից 4-րդը, արձանագիր
Խաչքար Ագարիա քահանայի և Գուլիաշի	15 դ.		«Ծաղկեվանք» մատուռից հվ, 6 խաչքարերից աջից 2-րդը
Խաչքար	15 դ.		եկեղեցուց 30 մ հվ-աե, կանգնեցված գետնին
Խաչքար	15 դ.		եկեղեցուց 30 մ հվ-աե, կանգնեցված գետնին
Խաչքար	15-16 դդ.		եկեղեցուց 15 մ աե, հողի մեջ խրված գույգ խաչքարերից ձախակողմյանը
Խաչքար Մաթոսի	1516 թ.		եկեղեցուց 15 մ աե, հողի մեջ խրված գույգ խաչքարերից աջակողմյանը
Խաչքար Մունի և Սուքիասի	1517 թ.		«Ծաղկեվանք» մատուռից հվ, 6 խաչքարերից աջից 3-րդը
Խաչքար Խոջիկի	1517 թ.		եկեղեցուց 30 մ աե, հողի մեջ խրված գույգ խաչքարերից ձախակողմյանը
Խաչքար Շիխի	1517 թ.		եկեղեցուց 30 մ հվ-աե
Խաչքար Հովհաննես քահանայի, Նատարի և Հովհանի	1517 թ.		եկեղեցուց 8 մ հվ, կանգնեցրած գետնին
Խաչքար Խոնդաղի	1518 թ.		եկեղեցուց 30 մ աե, հողի մեջ խրված գույգ խաչքարերից աջակողմյանը
Խաչքար Բեկեսի և Սուքիասի	1519 թ.		«Ծաղկեվանք» մատուռից հվ, 6 խաչքարերից աջից 1-ինը
Խաչքար Մխիթարի	1522 թ.		եկեղեցուց աե, խրված հողի մեջ
Խաչքար Ալեքսանի	1528 թ.		եկեղեցուց 30 մ հվ-աե, շարքով կանգնած 4 խաչքարերից աջից 1-ինը
Խաչքար Էզդանի	1528 թ.		եկեղեցուց 25 մ հվ, կանգնեցրած գետնին
Խաչքար Արիստակեսի	1536 թ.		եկեղեցուց 30 մ հվ-աե, շարքով կանգնած 4 խաչքարերից աջից 2-րդը
Խաչքար Կուլիբատանի	1539 թ.		եկեղեցուց 10 մ աե, խրված հողի մեջ
Խաչքար	1571 թ.		«Ծաղկեվանք» մատուռի ամ պատի մոտ պատվիրատու՝ Փիրեվատ
Խաչքար	16 դ.		եկեղեցուց 30 մ հվ, կանգնեցված գետնին
Խաչքար	16 դ.		եկեղեցուց 10 մ հվ-աե, կանգնեցրած գետնին պատվիրատու՝ Գրիգոր

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
Խաչքար Ավագի	16 դ.		եկեղեցուց 10 մ աե, կանգնեցված գետնին
Խաչքար Սարգարիտի	16 դ.		եկեղեցուց 15 մ հվ-ամ, խրված հողի մեջ
Խաչքար Նասերի	16 դ.		եկեղեցուց 20 մ հվ-աե, խրված հողի մեջ
Խաչքար Գուլամի	16 դ.		«Ծաղկեվանք» մատուռի ամ պատի մոտ, 5 խաչքարերից ձախից 2-րդը
Խաչքար	16 դ.		«Ծաղկեվանք» մատուռի հվ պատի մոտ, խրված հողի մեջ
Խաչքար Մխիթարի	16 դ.		եկեղեցուց 30 մ հվ-աե, կանգնեցված գետնին
Խաչքար Ագարի	16 դ.		եկեղեցուց 30 մ հվ-աե, շարքով կանգնած 4 խաչքարերից աջից 3-րդը
Խաչքար	16 դ.		եկեղեցուց 10 մ հվ, կանգնեցրած գետնին, զույգ խաչքարերից ձախակողմյանը
Խաչքար Փաշապեկի	16 դ.		եկեղեցուց 10 մ հվ, կանգնեցրած գետնին
Խաչքար	16-17 դդ.		եկեղեցուց 20 մ հվ, կանգնեցրած գետնին
Խաչքար	16-17 դդ.		եկեղեցուց 10 մ հվ, կանգնեցրած գետնին պատվիրատու՝ Դավիթ քահանա և Արնաս
Խաչքար Սարգարիտի	16-17 դդ.		եկեղեցուց 10 մ հվ, կանգնեցրած գետնին, զույգ խաչքարերից աջակողմյանը
Խաչքար	16-17 դդ.		եկեղեցուց 5 մ աե, խրված հողի մեջ
Խաչքար	16-17 դդ.		եկեղեցուց 30 մ հվ-աե, հողի մեջ խրված զույգ խաչքարերից ձախակողմյանը պատվիրատու՝ Ոսկան երեց
Խաչքար	16-17 դդ.		եկեղեցուց 30 մ հվ-աե, հողի մեջ խրված զույգ խաչքարերից աջակողմյանը
Խաչքար Բեկի	16-17 դդ.		եկեղեցուց 30 մ հվ-աե, շարքով կանգնած 4 խաչքարերից ձախից 1-ինը
Խաչքար Առաքել քահանայի	16-17 դդ.		«Ծաղկեվանք» մատուռից 5 մ հվ, խրված հողի մեջ
Խաչքար Ոսկան քահանայի	1604 թ.		«Ծաղկեվանք» մատուռի ամ պատի մոտ, 5 խաչքարերից ձախից 3-րդը
Խաչքար Մկրտիչի	1607 թ.		«Ծաղկեվանք» մատուռի ամ պատի մոտ, 5 խաչքարերից աջից 1-ինը կազմող՝ Հովսեփ
Խաչքար Մարինայի	1609 թ.		«Ծաղկեվանք» մատուռի ամ պատի մոտ, 5 խաչքարերից աջից 2-րդը կազմող՝ Ակոբ
Խաչքար Ավանեսի	1649 թ.		եկեղեցուց 15 մ աե, խրված հողի մեջ

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
Տապանաքար Մելիքբեկի	1538 թ.		
Տապանաքար ուստա Մարտիրոսի	1549 թ.		
Տապանաքար Ավագի	1658 թ.		
Տապանաքար Մելիքի	1670 թ.		
Տապանաքար	1678 թ.		եկեղեցուց 9 մ աե, արձանագիր
Եկեղեցի Սբ. Աստվածածին	19 դ.		գերեզմանոցի հս եզրին
Խաչքար	9-10 դդ.		ագուցված հս պատին
Խաչքար Արուսեկի	12-13 դդ.		ագուցված մկրտարանի ամ պատին, գլխիվայր
Խաչքար	13 դ.		ագուցված ամ պատին, արտաքուստ
Խաչքար Աղունի, Եզտանբախշի	1486 թ.		ագուցված բեմին
Խաչքար Ճանտարի	15 դ.		հվ-ամ անկյան շարվածքում, հորիզոնական դիրքով
Խաչքար	15 դ.		ագուցված խորանում
Խաչքար Ուսունի, Թահամի և Երանշահի	15 դ.		ագուցված խորանում, արձանագիր
Խաչքար Հապրալիի	1518 թ.		ագուցված խորանում
Խաչքար Ջաքարիա արեղայի	1528 թ.		ագուցված խորանում
Խաչքար	1528 թ.		ագուցված խորանում
Խաչքար	1536 թ.		ագուցված խորանում
Խաչքար Մկրտիչի	1539 թ.		ագուցված խորանում կազմող՝ Պախշայիչ
Խաչքար	1558 թ.		ագուցված մուտքի բացվածքի մոտ, ներքուստ
Խաչքար	16 դ.		ագուցված հս պատին, ներքուստ
Խաչքար	16 դ.		ագուցված խորանում
Խաչքար Նատարի	16 դ.		ագուցված խորանում
Խաչքար Բաբին բեկի	16 դ.		ագուցված խորանում

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
Խաչքար	16 դ.		ագուցված խորանում պատվիրատու՝ Շահում
Խաչքար Նագումի	16 դ.		ագուցված առ պատին
Խաչքար	16 դ.		ագուցված խորանում
Խաչքար Թոտի	16-17 դդ.		մուտքից ձախ, պահպանվել է վերնամասը
Խաչքար	16-17 դդ.		ագուցված խորանում պատվիրատու՝ Անտոն քահանա
Խաչքար Անտոն քահանայի	1637 թ.		ագուցված խորանում
Խաչքար Իմանի	1706 թ.		ագուցված մուտքից ամ
Մատուռ «Ծաղկեվանք»	9 դ.		գերեզմանոցի հս-առ եզրին
Խաչքար	9 դ.		առ պատի մոտ, ներքուստ, եռատված
Խաչքար	9 դ.		ամ պատի մոտ, արտաքուստ
Խաչքար	11-12 դդ.		ագուցված ամ պատին, արտաքուստ
Խաչքար Հայրապետի, Հայրուտի և Խաթունի	1284 թ.		առ պատին, ներքուստ ընդհանուր պատվանդանին կանգնած զույգ խաչքարերից ձախակողմյանը
Խաչքար Հայրապետի, Հայրուտի և Խաթունի	1284 թ.		առ պատին, ներքուստ ընդհանուր պատվանդանին կանգնած զույգ խաչքարերից աջակողմյանը
Խաչքար Աբրահամ քահանայի	1313 թ.		առ պատին, ներքուստ
Գյուղատեղի «Իշի գուրթան»	13 դ.	3 կմ հվ-ամ	Ծակքար գետի աջ ափին նախկինում հուշարձանը սխալմամբ ներկայացվել է Թագազյուղ գյուղով
Եկեղեցի	13 դ.		գյուղատեղիի առ կողմում, կիսավեր
Խաչքար	16 դ.		
Մատուռ	16-17 դդ.		գյուղատեղիի ամ մասում, կիսավեր
Խաչքար	9 դ.		եռատված, դրված գլխավայր
Գերեզմանոց	13-17 դդ.		եկեղեցուց ամ
տապանաքար	16 դ.		
տապանաքար	16 դ.		
Գյուղատեղի «Միրավի դար» («Հին Զոզներ»)	9-17 դդ.	6-7 կմ հվ-ամ	
Գյուղատեղի «Փշոտ Բիար»	9-17 դդ.	5 կմ հվ	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
Տապանաքար	15-16 դդ.		
Դամբարանադաշտ	մ.թ.ա. 2-1 հզ	աե մասում	գյուղի աե եզրին
Դամբարանադաշտ	մ.թ.ա. 2-1 հզ	հվ մասում	գյուղի հվ եզրին
Եկեղեցի Սբ. Աստվածածին	1872 թ.	գ. մ.	
Խաչքար	14-15 դդ.	ամ մասում	գյուղի ամ եզրին, արձանագիր
Խաչքար	14-15 դդ.	8 կմ հվ	«Մարի սուրբ» նորակառույց մատուռում
Խաչքար	14-15 դդ.	4 կմ հվ-ամ	Ծակքար գետից սկիզբ առնող ջրատարի մոտ, գորտակերպ վիշապաքարից աջ
Խաչքար	14-15 դդ.	4 կմ հվ-ամ	Ծակքար գետից սկիզբ առնող ջրատարի մոտ, գորտակերպ վիշապաքարից ձախ
Վիշապաքար	մ.թ.ա. 3-2 հզ	4 կմ հվ-ամ	գորտակերպ, Ծակքար գետից սկիզբ առնող ջրատարի մոտ

Հնագիտական եզրակացությունը կցված է Հավելված 12-ում:

2.9. Սոցիալ- տնտեսական բնութագիրը

ՀՀ Գեղարքունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևելքում՝ շրջապատելով Սևանա լիճը: Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Տավուշի և Լոռու մարզերին, արևելքից՝ պետական սահմանով, սահմանակից է Ադրբեջանի Հանրապետությանը, հարավից՝ ՀՀ Վայոց Ձորի մարզին, հարավ-արևմուտքից՝ ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ ՀՀ Կոտայքի մարզին: Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115 կմ, արևմուտքից-արևելք՝ 85 կմ: Մարզն իր մեջ ընդգրկում է Գավառի, Ճամբարակի (նախկին՝ Կրասնոսելսկ), Մարտունու, Սևանի և Վարդենիսի տարածաշրջանները: Մարզկենտրոնը՝ Գավառ քաղաքն է: ՀՀ Գեղարքունիքն ամենախոշոր մարզն է՝ տարածքը կազմում է 5349 քառ. կմ և զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության տարածքի 18%-ը:

Մարզի հողային ֆոնդը ըստ նպատակային նշանակության

Ըստ 2020 թվականի հողային հաշվեկշռի տվյալների՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի վարչական տարածքի մակերեսը 535,131.78 հա (5,351.32 քառ. կմ) է, այդ թվում՝

- 1) գյուղատնտեսական նշանակության՝ 345,259.95 հա,
- 2) բնակավայրերի՝ 21,568.57 հա,
- 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ 3,693.70 հա,
- 4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ 1,837.64 հա,
- 5) հատուկ պահպանվող տարածքների՝ 148,590.66 հա,
- 6) հատուկ նշանակության՝ 259.63 հա,
- 7) անտառային՝ 11,981.03 հա,
- 8) ջրային՝ 1,320.58 հա,
- 9) պահուստային հողերի՝ 620.00 հա:

ՀՀ Գեղարքունիքի մարզում կա 5 քաղաքային և 87 գյուղական համայնք: Գյուղական բնակչությունը տեղաբաշխված է անհամամասնորեն: Մարզի գյուղական համայնքներում մեծ տեսակարար կշիռ են կազմում խոշոր գյուղական համայնքները, որտեղ բնակվում են մարզի գյուղական բնակչության՝ 67.7%, խոշոր բնակավայրերի թիվը 21 կամ բնակավայրերի՝ 23.4%, իսկ փոքր գյուղական համայնքներում բնակվում են գյուղական բնակչության մոտ՝ 13%, փոքր բնակավայրերի թիվը՝ 47 կամ գյուղական բնակավայրերի՝ 53.5%:

Արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Օգտակար հանածոներից մեծ արժեք են ներկայացնում ոսկու (Սոթք), քրոմիտի (Շորժա), տորֆի, բազալտի, բնական շինանյութերի, հանքային ջրերի (Գավառ, Լիճք) և այլ պաշարները: Մետաղական հանքաքարերի արդյունահանման ոլորտում առաջավոր դիրք է զբաղեցնում «ԳԵՈՂՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ-ն:

ՀՀ Գեղարքունիքի մարզում մետաղական հանքաքարի թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով հաշվարկված աճը կազմել է 4576.3 մլն դրամ կամ ավելացել է 55%-ով: Հանքագործական արդյունաբերության և բաց հանքերի շահագործման ոլորտներում հատկապես կրաքարի (Արտանիշի),

քրոմիտի (Շորժա), բազալտի, բնական շինանյութերի և այլ պաշարների մասով մարզում թողարկված արտադրանքի ծավալը:

Մշակող արդյունաբերության ոլորտում հատկապես սննդի արտադրությունում մարզում թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով հաշվարկված կազմել է 9 580.9 մլն դրամ:

ՀՀ Գեղարքունիքի մարզն ունի առավելապես գյուղատնտեսական ուղղվածություն: Մարզում գյուղատնտեսությունում աշխատում է շուրջ 66 000 մարդ: Տարածաշրջանում լայն տարածում է գտել անասնաբուծությունը, մեղվաբուծությունը, ձկնարդյունաբերությունը (հիմնական հենքը Սևանա լիճն է), և բուսաբուծությունը՝ հատկապես կարտոֆիլի ու հացահատիկի մշակությունը:

Մարզի ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները բավականաչափ բարդ են: Սևանա լճի հյուսիս-արևելյան և հյուսիսային ափերով անցնում է ակտիվ տեկտոնական ճեղքվածք՝ 0.5-0.6 սմ/տարի շարժումով: Գրունտների առավելագույն արագացումները գրանցված են Սևանա լճի հյուսիս-արևելյան և արևելյան ափերում: Կապիտալ շինարարության համար առավել բարենպաստ են մարզի հարավային և արևմտյան հատվածները, որտեղ գրունտների առավելագույն արագացումները տատանվում են 0.5-0.6 սմ/տարի:

ՀՀ Գեղարքունիքի մարզը իրենից ներկայացնում է Հայաստանի ոչ խիտ բնակեցված մարզերից մեկը, բնակչության խտությունը կազմում է 43 մարդ/1կմ²:

Մարզի մշտական բնակչության թվաքանակը կազմել է 231.8 հազ. մարդ, որից մեծ մասը՝ 162.6 հազար մարդ կամ 70.2%-ը գյուղական, իսկ 69.2 հազար մարդ կամ 29.8%-ը քաղաքային բնակչությունն է: Տղամարդկանց թվաքանակը կազմում է 116.5 հազար մարդ կամ բնակչության 50.2%, իսկ կանանց թվաքանակը՝ 115.3 հազար մարդ, որը կազմում է բնակչության 49.8%-ը: ՀՀ Գեղարքունիքի մարզի մշտական բնակչությունը նվազել է 1.5%-ով, այսինքն՝ 235.4 հազարից հասնելով 231.8 հազարի (3600 մարդ): Նույն ժամանակահատվածում քաղաքային բնակչությունը ևս նվազել է՝ 71.5 հազարից հասնելով 69.2 հազարի, այսինքն 3.2%-ով կամ (2300 մարդ), իսկ գյուղական բնակավայրերում՝ 163.9 հազարից նվազել է 162.6 հազարով, այսինքն՝ 0.8%-ով կամ (1300 մարդ):

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապն ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ «Արմենթել» ՓԲԸ (BeeliNe ապրանքանիշ), «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ (Վիվա սելլ/USU ապրանքանիշ) և «ՅՈՒՔՈՄ» (Ucom ապրանքանիշ): «Արմենթել» ՓԲԸ (BeeliNe ապրանքանիշ) ՀՀ Գեղարքունիքի մարզում տեղակայված ավտոմատ հեռախոսակայանների միջոցով մատուցում է նաև ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: Հայաստանի Հանրապետության փոստային կապի «Հայփոստ-թրաստ» ԲԲԸ ՀՀ Գեղարքունիքի մարզի հինգ փոստային մասնաճյուղերը սպասարկում են մարզի 92 համայնքներին:

ՀՀ Գեղարքունիքի եթերային հեռուստահաղորդումները հեռարձակվում են «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ Գեղարքունիքի տարածքային բաժնի կողմից սպասարկվող թվային կայանների միջոցով: Մարզի տարածքում հեռարձակվում են «Հ1», «Հ2», «RTR-PLANETA», «Արմենիա», «Կենտրոն», «Շանթ», «Երկիր Մեդիա», «Շողակաթ» և մարզի տարածքում տեղակայված՝ «ՔյավառTV», «ԶանգակTV» և «STV1» հեռուստաընկերությունների ծրագրերը: Մարզի ամբողջ տարածքը ընդգրկված է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Մարզի բնակավայրերը գրեթե ամբողջությամբ ապահովված են ինտերնետ ծածկույթով և կաբելային հեռուստատեսությամբ:

Մարզի տարածքում գործում են 816.4 կմ ավտոճանապարհներ, որից միջպետական նշանակության 283.1 կմ, հանրապետական նշանակության 113.4 կմ և մարզային (տեղական) նշանակության 419.9 կմ: Հիմնանորոգված են միջպետական նշանակության ճանապարհներից 269.6 կմ, հանրապետական նշանակության ճանապարհներից 86.3 կմ և մարզային (տեղական) նշանակության ճանապարհներից 151.6 կմ: Ընդհանուր առմամբ հիմնանորոգված է մարզի պետական նշանակության ճանապարհներից 499.5 կմ, որը կազմում է ճանապարհային ցանցի 61.2%-ը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի քաղաքային 5 համայնքները ապահովված են 24 ժամյա էլեկտրամատակարարմամբ: ՀՀ հանրային ծառայությունները

կարգավորող հանձնաժողովի կողմից տրված էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների համաձայն մարզում էլեկտրաէներգիա են արտադրում 12 փոքր ՀԷԿ-եր, տարեկան մոտ 82.7մլն.կվտժ՝ 29888կՎտ ընդհանուր հզորությամբ: Մինևույն ժամանակ, կառուցման փուլում է գտնվում ևս 1 փոքր ՀԷԿ-եր՝ 209կՎտ ընդհանուր հզորությամբ: Փոքր հիդրոէլեկտրակայանների շահագործման դեպքում մարզում էլեկտրաէներգիայի արտադրությունը կավելանա 0.6 մլն.կվտժ-ով:

ՀՀ Գեղարքունիքի մարզը համարվում է հանրապետությունում ամենագազաֆիկացված մարզերից մեկը: Մարզի 92 համայնքներից գազաֆիկացված են 61-ը կամ մարզի համայնքների՝ 66.3%-ը, կամ մարզի բնակչության շուրջ 77.6%-ը բնակվում են գազաֆիկացված բնակավայրերում, մարզի գազաֆիկացված բնակարանների թիվը 46161է, ինչը կազմում է տնային տնտեսությունների 59.9%-ը:

Մարզի 34 համայնքներում, որոնցում բնակվում են մարզի բնակչության 60%-ը, աղբահանությունն իրականացվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Բոլոր 5 քաղաքներն ունեն աղբահանության համար նախատեսված մասնագիտացված մեքենաներ, որոնցով սպասարկում են մարզի բնակչության՝ 29.8%-ը: Աղբահանություն կազմակերպող համայնքներում հավաքված աղբը տեղափոխվում է բաց աղբավայրեր: ՀՀ Գեղարքունիքի մարզի 5 քաղաքները՝ Գավառ, Մարտունի, Սևան, Վարդենիս, Ճամբարակ, ընդգրկվել են «ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում կոշտ թափոնների կառավարման ծրագրում», որը ֆինանսավորվում է Վերակառուցման և Զարգացման կրոպակայանի (ՎԶԵԲ), կրոպակայան Միության հարևանության ներդրումային գործիք (EUNIF) կազմակերպության և Արևելյան կրոպայի էներգիայի արդյունավետության և բնապահպանության գործընկերության կողմից (E5P):

Մինչև 2011 թվականը մարզի քաղաքային համայնքների կեղտաջրերը անարգել լցվում էին Սևանա լիճ: Այդ խնդիրը կարգավորելու նպատակով 2011 թվականից մարզի Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում կառուցվեցին կեղտաջրերի մաքրման կայաններ, որի շնորհիվ լուծվեց կեղտաջրերի մաքրման

խնդիրը՝ Գավառ քաղաքում 36%-ով, Մարտունի քաղաքում 47%-ով, Վարդենիս քաղաքում 41%-ով: Երոպական ներդրումային բանկի միջոցներով Սևան քաղաքում նախատեսվում է մինչև 2019 թվականը կառուցել կեղտաջրերի մաքրման նոր կայան, որի արժեքը կազմում է 3.87մլն. երո: Մարզի բնակչության շուրջ 40%-ը չի օգտվում կեղտաջրերի մաքրման կայաններից և կեղտաջրերը լցվում են հատուկ այդ նպատակով փորված կեղտաջրերի հորատանցքեր:

Մինչև 2011 թվականը մարզի քաղաքային համայնքներում ջրամատակարարումը իրականացվում էր օրական 2-4 ժամ: 2011-2015 թվականներին «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն միջազգային ներդրումների հաշվին կառուցվեց շուրջ 805 կմ երկարության խմելու ջրի ջրագծեր, որի արդյունքում մարզի բնակչության 57%-ը (հիմնականում քաղաքային համայնքներում բնակվող) ապահովված է 24 ժամյա ջրամատակարարումով, իսկ 43%-ը ըստ ջրամատակարարման Ժամանակացույցի: 2011 թվականին մարզում փողոցային լուսավորություն ուներ ընդամենը 29 համայնք: 2012 թվականին մարզի թվով 11 համայնքներում անցկացվեց փողոցային լուսավորություն: Ներկայումս մարզի 48 համայնքներում անցկացվել է փողոցային լուսավորություն: Մարզի քաղաքային համայնքների փողոցների շուրջ 70%-ը ապահովված է փողոցային լուսավորությամբ:

Լիճք գյուղը գտնվում է Սևանա լճի հարավարևմտյան մասում՝ լեռներով շրջապատված գոգավորությունում: Գյուղի տարածքում կան բազմաթիվ աղբյուրներ, որոնց ջրերից գոյանում է Լիճք գետը:

Տեղանքի բուսական աշխարհի հետ կապված գյուղն սկզբից կոչել են Եղեգնագեղ, Եղեգնագյուղ, 1836 թվականից՝ Գյուլ, Գել, Գյուլ-Քենդ, իսկ 1946 թվականի ապրիլի 26-ի ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի որոշմամբ՝ Լիճք:

Լիճքի մոտ պահպանվել են բրոնզեդարյան դամբարանադաշտ («Չորանոցներ» թաղամաս), կիկլոպյան ամրոցի և միջնադարյան բնակատեղիի ավերակներ (Պողոսի գյուղ), մի մատուռ (Ծաղկավանք), խաչքարեր, որոնցից մեկը կանգնեցրել են Խաթունի և Հայրումի որդիները՝ 1284 թվականին: 1950-1960 թվականներին հայտնաբերվել է նաև արամերեն մեկ արձանագրություն:

Լիճքեցիները մինչև խորհրդային տարիները, համագործակցելով հարևան Վերին Ադյաման և Թագաքենդ գյուղերի բնակիչների հետ, քուրդ ու թուրք հրոսակներից հաջողությամբ պաշտպանել են իրենց ընտանիքներն ու ունեցվածքը, որի համար էլ ստացել են «արյունախում» մականունը:

1918 թվականին տեղահան են արել Ահմադ Աղի գյուղը՝ սեփականացնելով այդ գյուղի տարածքները: Գյուղի նախնիներն այստեղ են վերաբնակվել 1829-1830 թվականներին՝ գաղթելով Արևմտյան Հայաստանի Բայազետի գավառի տարածքում գտնվող Ալաշկերտ քաղաքի կենտրոնական մասում տեղակայված Բերդ թաղամասից: Ըստ 1831-1842 թվականների արխիվային տվյալների Եղեգնագյուղ (Գյուլ-Քենդ) գյուղում սկզբից բնակություն են հաստատել Ալաշկերտից գաղթած 43 ընտանիքներ, մեկ ընտանիք՝ Ներքին Ադյաման (Ներքին Գետաշեն) գյուղից և երկու հոգի Թուրքիայից: Բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 273 մարդ: Նույն աղբյուրներում նշվում է, որ Գյուլ-Քենդ գյուղի վարելահողերն ու խոտհարքերը բավականին շատ են: Բնակիչներն անձնական կարիքների համար զբաղվել են նաև ձկնորսությամբ: Պետք է նշել, որ գյուղի տարածքում գտնվող քաղցրահամ աղբյուրների ջրերը իշխան ձկան իսկական «պահեստարաններ» էին: Գյուղն ունեցել է նաև երկու ջրաղաց և նույնքան էլ ձիթհանք: Գործող ջրաղացներն ու ձիթհանքերը հուշում են, որ գյուղի բնակիչները այդ տարիներին էլ են հիմնովին կառչած եղել հողին, որից քամել են իրենց գոյատևման հիմնական միջոցը՝ հացը: 1852 թվականի տեղական մարդահամարի տվյալներով Գյուլ-Քենդ գյուղում կրկին եղել է 44 ծուխ, երեք ծուխ մարել է, որոնց փոխարինել են 1847 թվականին Մուշից գաղթած երեք ընտանիքները: Ազգաբնակչության թիվը 265 է՝ 167 հոգի արական սեռի և 98 հոգի՝ իգական: Բնակչությունը հետագա քսան տարիների ընթացքում լիովին հարմարվել է տեղանքին ու կլիմային, ընդարձակել է վարելահողերը, զբաղվել է անասնապահությամբ ու ձկնորսությամբ: 1873 թվականին գյուղի ծխերի թիվը համարյա կրկնապատկվել է (84 ծուխ), իսկ բնակչությունը աճել է մոտ երեք անգամ՝ հասնելով 801 մարդու: Նրանց սեռային կազմն էլ է հավասարակշռվել՝ 397 տղամարդ և 404 կին: 1886 թվականին արխիվային տվյալների համաձայն գյուղի

ծխերի թիվը արդեն 95 էր, բնակչությունը՝ 1173: Հետագա տարիներին գյուղի ազգաբնակչության աճի մասին կարելի է ծանոթանալ ստորև բերված աղյուսակից:

Աղյուսակ 2.9.1

Տարեթիվ	Բնակչություն	Տղամարդ	Կին
1897	1371	668	703
1926	2231	1142	1089
1939	2716	1405	1311
1959	2355	987	1368
1970	3395	1611	1784
1979	3386	1628	1758
1989	5681	2768	2911
2001	5037	2589	2448
2011	5417	2797	2620

Ինչպես երևում է վերևի աղյուսակից, Հայրենական պատերազմը անմիջականորեն ազդել է գյուղի բնակչության թվաքանակի վրա: Այդ պատերազմին մասնակցել է 803 լիճքեցի, որոնցից 181-ը չեն վերադարձել: Պատերազմի տարիներին մոտ տասը ծուխ լրիվ մարել է. իր սև գործն է արել նաև սովը: Այդ տարիներին զգալի թվով լիճքեցիներ օրվա հացի համար տեղափոխվել են Արարատյան դաշտ, որտեղ էլ ապրում են մինչև այժմ:

Անաշե-Բերդ-Լիճք

Լիճքի խորհրդանիշն իրենից ներկայացնում է ոսկով շրջանակված վահան, որի վրա նկարված է Ալաշկերտի բերդը: Բերդի պարսպի վրա գրված է Անաշե, որը Ալաշկերտի ուրարտական շրջանի անունն է: Բերդի դարպասների վրա, որոնց վրա փականներ չկան ու սպասում են մեր վերադարձին, պատկերված են երկու առյուծներ, իսկ առյուծը Բագրատունիների խորհրդանիշն է: Առյուծներից մեկի մոտ քրիստոնեության խորհրդանիշն է՝ խաչը, իսկ մյուսի մոտ վարդ՝ Բագրևանդի խորհրդանիշը: Բերդից քիչ ներքև Արածանին է, որի մեջ, ըստ ավանդույթի Տրդատ առաջինի հրամանով քրիստոնյա է մկրտվել հայ ժողովուրդը: Արածանից ներքև արդեն Սևանա լճի մի մասն է երևում, որի ափին՝ եղեգների մեջ խրված Լիճք տեղանունը, որը խորհրդանշում է գյուղը:

Համայնքի մակերեսը կազմում է 39.342 կմ²: Հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 126.0 կմ: Համայնքի բնակչության թիվը կազմում է 5487 մարդ, ապրում են հայեր, ռուսներ, եզդիներ: 1969թ.-ին Լիճքում կառուցվել է հանքային ջրի շշալցման գործարան 75մլն. շիշ տարեկան հզորությամբ, իսկ 1970-ին՝ ձկնաբուծարանը: Համայնքում գործում է երկու՝ հիմնական և միջնակարգ դպրոց: Համայնքում գործել է կենցաղի տուն: Համայնքը գազաֆիկացված է: Բավարար կարգով ապահովված է խմելու և ոռոգման ջրերով: Բնակչության զգալի մասը մեկնում է արտագնա աշխատանքների: Համայնքի հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Համայնքում գործում են տարբեր առևտրաարտադրական օբյեկտներ, գազի և բենզինի լցակետեր:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ստորև ներկայացվում է շրջակա միջավայրի բնական բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների հակիրճ բնութագիրը:

Մթնոլորտային օդի վրա ազդեցություններ կապված են ձկների կերի, արտաթորանքի և օրգանական նյութերի քայքայումից տհաճ հոտի առաջացմամբ: Տհաճ հոտի առաջացումը կանխելու նպատակով՝ յուրաքանչյուր ավազան կցամաքեցվի և կմաքրվի տարեկան 1 կամ 2 անգամ հաճախականությամբ: Տհաճ հոտի առաջացումը կանխելու նպատակով օգտագործվում են նաև մեխանիկական զտման սարքերով կահավորված ավազան, որտեղ ջրից ֆիլտրում են մեխանիկական խառնուրդները, կախութային նյութը: Աերատորները մեծացնում են ջրում լուծված թթվածնի մակարդակը, ինչը խթանում է աերոբ բակտերիաների ակտիվությունը: Աերոբ բակտերիաները արագացնում են օրգանական թափոնների քայքայումը՝ կանխելով ամոնիակի (NH_3), ծծմբաջրածնի (H_2S) և մեթանի (CH_4) կուտակումը, որոնք հիմնականում առաջացնում են տհաճ հոտեր: Տարին 1 կամ 2 անգամ հաճախականությամբ կատարվում են ավազանների հատակային նստվածքի մաքրման աշխատանքներ:

Թափոններ - Ձկնարդյունաբերական կազմակերպություններում առաջացող թափոնների կառավարումն իրականացվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի հուլիսի 27-ի N 262-Լ հրամանով հաստատված ուղեցույցի պահանջներով:

Ձկնարդյունաբերական կազմակերպություններում կարող են գոյանալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 342-Ն հրամանով հաստատված ցանկում ներառված հետևյալ թափոնատեսակները.

1. Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի), ներկայում տարեկան մոտ 1.8 տ, ծածկագիրը 91200400 01 00 4 (4-րդ դաս): Ձկնաբուծարանի

արտադրական ծավալների ընդլայնման հետևանքով թափոնատեսակի ծավալը կհասնի 4 տոննայի:

2. «Մննդամթերքի արտադրության հոսքաջրերի նստվածք» թափոնատեսակի ծածկագիրը՝ 11139030 02 00 4 (4-րդ դաս), ներկայում մոտավոր քանակը տարեկան 8 տոննա է: Ձկնաբուծարանի արտադրական ծավալների ընդլայնման հետևանքով թափոնատեսակի ծավալը կհասնի 20 տոննայի:

Հաշվի առնելով, որ ձկնաբուծարանի արտադրական ծավալները ավելանում են 95-մինչև 200 տոննա, ապա թափոնների քանակությունը նույնպես կավելանա: Կենցաղային աղբի ծավալները տարեկան 1.8 տոննայից կհասնի մինչև 4 տոննա: Մննդամթերքի արտադրության կեղտաջրերի նստվածքի ծավալները կհասնեն 20 տոննա, ներկա 8 տոննայի փոխարեն: Այս հաշվարկները հիմնված են ձկնաբուծարանի բազմամյա փորձի հիմնան վրա:

Ձկնաբուծության համար նախատեսված ջրավազաններում գոյացող թափոնը՝ կերի ավելցուկից և ձկան արտաթորանքների պինդ զանգվածից գոյացող նստվածքը մոտ 20 տոննա, կարող է ծառայել որպես բարձրարժեք պարարտանյութ: Թափոննը տրամադրվում է Լիճք բնակավայրի բնակիչներին հողերի պարարտացման նպատակով:

Համաձայն «ձկան և ձկնամթերքի անվտանգության մասին» Եվրոպական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (ԵՍՄ ՏԿ 040/2016)՝ սատկած ձուկը կարելի է օգտագործել, որպես անասնակեր, պահպանելով համապատասխան միջոցառումները: Որպես անասնակեր նախատեսված ձկան թափոնների պահումը իրականացվում է հատուկ մակնշված, կափարիչով ամուր փակվող տարաներում և արտադրամասից հեռացումը՝ հերթափոխի ընթացքում առնվազն 1 անգամ: Սատկած ձուկը տրամադրվում է Լիճք բնակավայրի բնակիչներին, որպես անասնակեր օգտագործելու համար: Օրեկան սատկած ձկան ծավալը կազմում է 3-5 կիլոգրամ:

Ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները կապված են ջրառի իրականացման և կեղտաջրերի հեռացման հետ: Ինչպես արդեն նշվել է «ԳՈՍ» ՓԲ ընկերությունը ջրօգտագործումն իրականացվում է (16/01/2025-16/01/2028 թթ

գործողության ժամկետով) N 042-25 Ջրօգտագործման թույլտվության պայմաններին համապատասխան՝ Լիճք գետից 450լ/վրկ և կապտաժավորված աղբյուրից 38լ/վրկ ծախսով: Լճակներում ջուրը շրջանառվելուց հետո հեռացվում է դրենաժային համակարգ՝ Լիճք գետ 486.3լ/վրկ ծավալով: Չնայած (16/01/2025-16/01/2028 թթ գործողության ժամկետով) N 042-25 Ջրօգտագործման թույլտվության կեղտաջրերի մաքրում չի պահանջվում, այնուամենայնից Ընկերությունը որպես հավելյալ բնապահպանական միջոցառում 4-րդ և 12-րդ ավազաններում տեղադրել է մեխանիկական մաքրման թմբուկային ֆիլտրեր:

Ըստ Սևանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանի Լիճք գետի Լիճք բնակավայրից 0.5 կմ հոսքն ի վեր և գետաբերանին կատարվել են մշտադիտարկման աշխատանքներ: Երկու դիտակետերում էլ ջրի որակը գնահատվել է լավ (II դաս): Ձկնաբուծական տնտեսության ջրահեռացման կետը գտնվում է այդ երկու կետերի միջնամասում: Արդյունքները վկայում են, որ ձկնաբուծարանը չունի էական ազդեցություն Լիճք գետի որակի վրա:

Ընկերությունի իր հերթին կատարել է ջրի նմուշարկում ջրահեռացման կետում: Լաբորատոր անալիզների արդյունքները կցված են սույն հաշվետվությանը որպես հավելված:

Ջրօգտագործման թույլտվությամբ սահմանվել է վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի հետևյալ տվյալները՝ ԹԿՊ_{լրիվ} 4.0գ/մ³, ԹԿՊ 10.0գ/մ³, կախության մասնիկներ 11.0գ/մ³, ազոտ ամոնյակային 0.2գ/մ³, նիտրատ-իոն 0.5գ/մ³, նիտրիտ-իոն 0.05գ/մ³, ֆոսֆատ-իոն 0.05գ/մ³:

Հողային ռեսուրսների վրա աղտոտման հետ կապված ազդեցություններ չեն դրսևորվում, քանի որ ձկնաբուծարանի տարածքը արդեն իսկ կառուցապատված է՝ հողային նոր աշխատանքներ չի նախատեսվում:

Բուսական աշխարհ - Ձկնաբուծարանի տարածքում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն աճում: Նոր հողային աշխատանքներ չեն նախատեսվում, հետևաբար, բուսական աշխարհի վրա ազդեցություններ չեն դրսևորվելու:

Կենդանական աշխարհ - Ձկնաբուծարանի տարածքում չկան խոշոր կաթնասունների բներ/որջեր, չեն նշվել սողուններ կամ երկկենցաղներ: ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն հանդիպել:

Ավազանների մակերեսները ծածկված չեն ցանցով, և պատահում է, որ թռչունները ձուկ են որսում ավազաններից: Աձեցվող ձկնատեսակը կերային բազա է հանդիսանում շրջանի թռչնաշխարհի ներկայացուցիչների համար: Հետևաբար, կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցություններ չեն դրսևորվելու:

Բնական էկոհամակարգեր - Ձկնաբուծարանը շահագործվում է 1959 թվականից, տարածքը հանդիսանում է ակտիվ տնտեսական յուրացման գոտի, որտեղ բնական էկոհամակարգերը խիստ փոփոխված և դեգրադացված են, հետևաբար վտանգված էկոհամակարգերի վրա ծիածանափայլ իշխանի արտադրությունը ազդեցություն չի ունենալու:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վրա ձկնաբուծարանի աշխատանքը ազդեցություն չի ունենալու, քանի որ ձկնաբուծարանի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ չկան:

Աղմուկ - Լիճք բնակավայրի բնակելի շինությունները գտնվում են ձկնաբուծարանի տարածքից 150մ հեռավորությունների վրա: Ձկնաբուծարանի տարածքում աղմուկի առաջացումը կապված է ջրավազանների ջուրը թթվածնով հագեցնող և ջրի շրջապտույտը ապահովող աերատորների աշխատանքի հետ:

Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80դԲԱ:

Աղմուկի ազդեցությունը ազդակիր բնակավայրում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

Աղմուկի մակարդակի նվազումը ըստ հեռավորության կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$L2 = L1 - 20 \cdot \log_{10} \left(\frac{r2}{r1} \right) \text{ որտեղ }`$$

L1-ը ձայնի մակարդակն է աղբյուրից r1 մետր հեռավորության վրա,

L2-ը վերջնական ձայնի մակարդակն է աղբյուրից r2 հեռավորության վրա,

Աղմուկի ամենաբարձր և հիմանական աղբյուր հանդիսանում է ավազանների վրա տեղադրված աէռատորները: Որի 1 մետր հեռավորության վրա աղմուկի առավելագույն մակարդակը կազմում է 91 dB:

Աղմինիստրատիվ շենքի հեռավորությունը ամենամոտ տեղադրված աէռատորից կազմում է 35 մ: Կատարվող հաշվարկը աղբյուրից մինչև աշխատավայր մարող աղմուկի վերաբերյալ է:

Հաշվարկը կատարվել է վատագույն սցենարով, ենթադրելով, որ չկա աղմուկը խլացնող որևէ պատնեշ:

$$L_2 = 91 - 20 \cdot \log_{10} \left(\frac{35}{1} \right)$$

$$L_2 = 91 - 20 \cdot \log_{10} \left(\frac{35}{1} \right) \quad L_2 = 91 - 20 \cdot \log_{10} \left(\frac{35}{1} \right)$$

$$L_2 = 91 - 20 \cdot \log_{10}(35)$$

$$\log_{10}(35) = 1.544$$

$$L_2 = 91 - 30.88$$

$$L_2 \approx 60.12 \text{ dB}$$

Աղմինիստրատիվ շենքի հարող տարածքում աղբյուրից 35 մետր հեռավորության վրա աղմուկի մակարդակը կլինի ոչ ավել քան 60.12 dB:

Ամենամոտ բնակելի տան հեռավորությունը ավազաններից, որտեղ տեղադրված են աէռատորները կազմում է 300 մետր

$$L_2 = 91 - 20 \cdot \log_{10} \left(\frac{300}{1} \right)$$

$$L_2 = 91 - 20 \cdot \log_{10} \left(\frac{300}{1} \right) \quad L_2 = 91 - 20 \cdot \log_{10} \left(\frac{300}{1} \right)$$

$$L_2 = 91 - 20 \cdot \log_{10}(300)$$

$$\log_{10}(300) = 0.477 + 2 = 2.477$$

$$20 \cdot 2.477 = 49.54$$

$$L2 = 91 - 49.54$$

$$L2 \approx 41.46 \text{ dB}$$

Ամենամոտ բնակելի տան շրջակայքում աղմուկի մակարդակը կսպառվի միջև առավելագույնը 41.46 dB:

Հաշվարկներով ստացված արդյունքները չեն հակասում «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ հրամանին:

Հետևաբար, ձկնաբուծարանի մշտական աշխատատեղերով տարածքներում աերատորների աշխատանքից առաջացող աղմուկի մակարդակը և ազդակի Լիճք բնակավայրի տարածքում հաշվարկային եղանակով ստացված աղմուկի մակարդակը գտնվում են նորմատիվային փաստաթղթերով սահմանված նորմերում:

Ձկնաբուծարանի տարածքի օժանդակ շինությունում կազմակերպված են աշխատակիցների բնականոն աշխատանքի համար անհրաժեշտ սանիտարակենցաղային պայմանները՝ հանգստի և սնունդ ընդունելու համար բոլոր անհրաժեշտ պարագաներով կահավորված սենյակ, հանդերձարան և լվացարանով ու զուգարանակոնքով սանհանգույց (մշտական համալրվում է անհրաժեշտ հիգիենիկ պարագաներով՝ հեղուկ օձառ, թղթե սրբիչներ, զուգարանի թուղթ, ախտահանող հեղուկներ):

4. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ձկնաբուծարանի շահագործման ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- ❖ ավազանների մասնակի փլուզում կամ վնասում,
- ❖ ձկնարգել ցանցերի վնասում,
- ❖ հրդեհի առաջացում,
- ❖ աշխատակիցների վնասվածքները,
- ❖ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- աշխատակիցների վնասվածքներից, ինչպես նաև տարատեսակ վթարներից խուսափելու համար նախատեսվում է.
 - նվազագույրը 3 ամիսը մեկ անգամ ոլոր աշխատողներն անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,
 - հրահանգավորումն իրականացնում է աշխատանքների ղեկավարը,
 - ձկնաբուծարանի տարածքում հատուկ հատկացված վայրում տեղադրել դեղարկղիկ,
 - աշխատողներն անցնում են դեղորայքի և բժշկական պարագաների ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում,
 - ավազանների մասնակի փլուզումիվ կամ վնասումից խուսափելու համար նախատեսվում է.
 - ավազանների կողային պատերի, ինչպես նաև ջրային հոսքերի մուտքերի և ելքերի տեղազննություն՝ ամենօրյա հաճախականությամբ,
 - հատակային նստվածքների մաքրման նպատակով ավազանների ցամաքեցման ժամանակ ավազանների կողային պատերի և հատակի մոնիթորինգ՝ տարեկան 1-ից 2 անգամ,

- ձկնարգել ցանցերի վնասումից խուսափելու համար, կամ վնասվելու պարագայում նախատեսվում է.
- ձկնաբուծարանի ջրառի կետերի հատվածներում, անմիջապես ավազանների ջրի մուտքի և ելքի հատվածներում, ջրահեռացման կետում տեսողված երկաստիճան ձկնարգել ցանցերի մոնիթորինգ՝ ամենօրյան հաճախականությամբ,

(հարկ է նշել, որ ձկնարգել ցանցերի երկաստիճան մոդելն ընտրված է այն նպատակով, որ ցանցերից մեկը վնասվելու պարագայում, մյուսը կկանխի ձկների փոխուստը, մինչ վնասված ցանցի փոխարինումը):
- մոնիթորինգի ընթացքում հայտնաբերված վնասված ձկնարգել ցանցի փոխարինում նորով,
 - հրդեհի առաջացումից խուսափելու համար նախատեսվում է.
- ձկնաբուծարանի տարածքն ապահովել հակահրդեհային անվտանգության միջոցներով (հակահրդեհային միջոցառումների վահանակ, բահեր, ավազ, կրակմարիչներ և այլն),
- ձկնաբուծարանի տարածքը, ինչպես նաև ավազանների միջտարածությունները ժամանակ առ ժամանակ մաքրել թափոններից և չոր խոտերից:

Ընդերքածին արտակարգ իրավիճակների՝ երկրաշարժի դեպքում արագ արձագանքելու նպատակով նախատեսվում է ձկնաբուծարանում աշխատող անձնակազմի համար կազմակերպել իրազեկման դասընթացներ և ներկայացնել գործողությունների համառոտ ծրագիրը: Երկրաշարժի դեպքում՝ ցնցումները զգալու ժամանակ հանքում աշխատող անձնակազմը պարտավոր է.

 - անջատել բոլոր գործող սարքավորումները, մեխանիզմներն ու մեքենաները,
 - հեռանալ շինություններից,
 - կանգնել բացօթյա տարածքում,
 - կապ հաստատել կազմակերպության ղեկավարության հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,

- կապ հաստատել տարածքային կառավարման մարմինների հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- ապահովել աշխատակիցների տարհանում,
- ձկնաբուծարանի տարածքում հատուկ հատկացված վայրում տեղադրել դեղարկղիկ, աշխատողներին ծանոթացնել դեղորայքի և բժշկական պարագաների ճիշտ օգտագործման, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերման կանոններին:

Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուխ, ամպրոպ) ի հայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- կրճատվում կամ ժամանակավորապես դադարեցվում է աշխատանքի տևողությունը,
- աշխատակիցները պատսպարվում են ձկնաբուծարանի տարածքում գտնվող, օդափոխման, ջեռուցման և ջրամատակարարման համակարգերով կահավորված օժանդակ շինություններում:

5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Ձկնաբուծարանի շահագործման աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Վերահսկել կերաբախշման համակարգը:
2. Ներդնել այնպիսի կերաբաշխման համակարգ որը առավելագույնի կհասցնի կերային գործակիցը և նվազագույնի՝ թափոնների գոյացումը:
3. Ձկնակերի բաղադրության օպտիմիզացումը և ձկնակերի յուրացման աստիճանի բարձրացումը, ինչպես նաև կերի բախշման տեխնոլոգիայի բարելավումը:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 750000 դրամ:

Աղյուսակ 5.1

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ	
Ջրի անալիզների իրականացում ջրառի կետերում	Էռամսյակ
Ջրի անալիզների իրականացում լճակներում	Էռամսյակ
Ջրի անալիզների իրականացում Լիճք գետ թափման կետում	Էռամսյակ
Լիճք գետում՝ մինչև ձկնաբուծարան մտնելը, ջրի ելքի չափումներ	Էռամսյակ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Բնապահպանական ռիսկերը մեղմացնող միջոցառումների ծրագիր	
Աշխատանքներ	Մեղմացող միջոցառումներ
Կերի պահում	<ul style="list-style-type: none"> Անասնակերը պետք է պահվի համակցված կեր ձևերի համար տեխնիկական պայմանով սահմանված պահանջներով:
Ջրային ռեսուրսներ	<ul style="list-style-type: none"> ջրառի բոլոր կետերն ապահովել տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ սարքերով: Դրանք կապարակնքել: Ջրի որակի վերահսկողություն: Ջրի խնայողաբար օգտագործման նպատակով կիրառել աերատորներ, որոնք ջրում ավելացնում են լուծված թթվածնի մակարդակը: Ընդհանուր համակարգից ջուրը մղվում է մեխանիկական գտման սարքերով կահավորված ավազան, որտեղ ջրից ֆիլտրում են մեխանիկական խառնուրդները, կախութային նյութը:
Թափոնների կառավարում	<ul style="list-style-type: none"> Ավազանների մաքրման աշխատանքներից առաջացած հատակային նստվածքը՝ սննդամթերքի արտադրության կեղտաջրերի նստվածք 11139030 02 00 4 օգտագործվում է որպես պարարտանյութ Լիճք բնակավայրի բնակիչների կողմից: Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) թափոնները հեռացվում են ձկնաբուծարանի տարածքից շաբաթը երկու անգամ կտրվածքով՝ համաձայն կնքված Կոմունալ ծառայությունների մատուցման պայմանագիր Ձկնաբուծարանի տարածքում տեղադրված են փակվող աղբամաններ:
Սոցյալական	<ul style="list-style-type: none"> Ընկերության տարածքում աշխատողների համար նախատեսված է հանդերձարան, ցնցուղարան, զուգարան և հանգստի սենյակ: Ձկնաբուծարանի աշխատանքներում ներգրավված են 6 աշխատողներ: Ավազանների մաքրման աշխատանքներից առաջացած հատակային նստվածքը տրամադրվում է Լիճք բնակավայրի բնակիչներին հողերը պարարտացնելու նպատակով: Մատկած մանրածուկը տրամադրվում է Լիճք բնակավայրի բնակիչներին որպես անասնակեր:
Հողային ռեսուրսներ	<ul style="list-style-type: none"> Ձկնաբուծարանի ընդլայնման ընթացքում հողային աշխատանքներ չեն նախատեսվում: Ձկնաբուծարանի տարածք մտնող մեքենաներում կստուգվեն յուղի արտահոսքի առկայությունը:
Օդային ավազան	<ul style="list-style-type: none"> Ձկների կերի, արտաթորանքի և օրգանական նյութերի քայքայումից տհաճ հոտի առաջացումը կանխելու նպատակով՝ յուրաքանչյուր ավազան կցամաքեցվի և կմաքրվի տարեկան 1 կամ 2 անգամ հաճախականությամբ: Տհաճ հոտի առաջացումը կանխելու նպատակով օգտագործվում են նաև մեխանիկական գտման սարքերով կահավորված ավազան, որտեղ ջրից ֆիլտրում են մեխանիկական խառնուրդները, կախութային նյութը: Աերատորները մեծացնում են ջրում լուծված թթվածնի մակարդակը, ինչը խթանում է աերոբ բակտերիաների ակտիվությունը: Աերոբ բակտերիաները արագացնում են օրգանական թափոնների քայքայումը՝ կանխելով ամոնիակի (NH₃), ծծմբաջրածնի (H₂S) և մեթանի (CH₄) կուտակումը, որոնք հիմնականում առաջացնում են տհաճ հոտեր:
Կենսաբազմազանություն	<ul style="list-style-type: none"> Վայրի տեսակների հետ փոխազդեցության վերահսկման նպատակով՝ ձկնաբուծարանի ջրառի հատվածներում, անմիջապես ավազանների ջրի մուտքի և ելքի հատվածներում, ջրահեռացման կետում տեղադրվում են երկաստիճան ձկնարգել ցանցեր:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Թափոնների հեռացում	Արտաքին զննում	Գործունեության ողջ ընթացքում	Կապալառու, համայնքի վերահսկողություն
Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Ընկերություն
Ջրի անալիզների իրականացում ջրատի կետերում	Լաբորատոր հետազոտություն	եռամսյակ	Ընկերություն
Ջրի չափումներ սարքերով լճակներում	Չափիչ սարքերով	եռամսյակ	Ընկերություն
Ջրի անալիզների իրականացում Լիճք գետ թափման կետում	Լաբորատոր հետազոտություն	եռամսյակ	Ընկերություն
Լիճք գետում՝ մինչև ձկնաբուծարան մտնելը, ջրի ելքի չափումներ	Լաբորատոր հետազոտություն	եռամսյակ	Ընկերություն
Մեխանիկական ֆիլտրերի, ավազանների, ձկնարգել ցանցերի վիճակի մշտադիտարկում	Տեսողական զննություն	ամենօրյա	Ընկերություն

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. СП.485.13130.2021:
2. «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմեր:
3. Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_ Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»:
4. ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»:
5. ՀՀՇՆ II - 7.01-96 «Շինարարական կլիմայաբանություն»:
6. ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին ՇՆԵՎԿ III-IV.2008
7. Քաղաքաշինության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ:
8. ՇՆուԿ 3.01.01-85 (Շինարարության արտադրության կազմակերպում);
9. <https://www.armstat.am/>:
10. «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման:
11. Շրջակա միջավայրի նախարարի 22.07.2022թ. «Ձկնարդյունաբերության թափոնների կառավարման ուղեցույցը հաստատելու մասին» N0 262-Լ հրամանը:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. Հավելված 1 – Իրավաբանական անձանց պետական ռեգիստր, քաղվածք:
2. Հավելված 2 - «Սևան» ազգային պարկի 1908.0 մետր բացարձակ նիշից բարձր տարածքներում հողամասի վարձակալության մասին N 126 Պայմանագիր:
3. Հավելված 3 - Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական:
4. Հավելված 4 - Ջրօգտագործման թույլտվություն:
5. Հավելված 5 – Համապատասխանության սերտիֆիկատ:
6. Հավելված 6 – «Վեոլիա Ջուր» ՓԲԸ պայմանագիր:
7. Հավելված 7 – «ՀԷՅ» ՓԲԸ պայմանագիր:
8. Հավելված 8 – «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ պայմանագիր:
9. Հավելված 9 – Կոմունալ ծառայությունների մատուցման պայմանագիր:
10. Հավելված 10 - Հողի օգտագործման իրավունքի N 130 պետական ակտ:
11. Հավելված 11 - Լաբորատոր անալիզների արդյունքներ:
12. Հավելված 12 – Հնագիտական եզրակացություն: